



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

85.

h-92

MEMORANDUM

1. The purpose of this memorandum is to provide a summary of the information received from the various sources regarding the activities of the group during the period from January 1, 1950, to December 31, 1950.

2. The information was obtained from the following sources:

3. The information received from these sources indicates that the group has been active in the field of [redacted] and has been successful in [redacted].

4. It is noted that the group has been active in the field of [redacted] and has been successful in [redacted].

5. The information received from these sources indicates that the group has been active in the field of [redacted] and has been successful in [redacted].

6. It is noted that the group has been active in the field of [redacted] and has been successful in [redacted].

7. The information received from these sources indicates that the group has been active in the field of [redacted] and has been successful in [redacted].


8. It is noted that the group has been active in the field of [redacted] and has been successful in [redacted].

Մ Ա Տ Ն Ն Ա Դ Ա Ր Ա Ն
Մ Ա Ն Կ Ա Ն Ց



7

ԻՐԼԱՆՏԱՅԻ ՏՆԱԿԸ



Ի Ր Լ Ա Ն Տ Ա Յ Ի

Տ Ն Ա Կ Ը

ՀԱՏՈՐ Բ.

№ 4161.




Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ս Ո Ւ Ր Բ Դ Ա Ջ Ա Ր

1867

1863







№ 4161.

Ի Ր Լ Ա Ն Տ Ա Յ Ի

Տ Ն Ա Կ Ը

Փ Լ Ո Ի Խ Ժ Ա

Նդուարդին զինուորութենէ ազատիլը:

Ան ատեններն որ Աւոնը բարի բարի առաքինութիւններով իր հոգին կը զարդարէր, և կամաց կամաց Իրլանտայի տնակին մէջը երջանկութիւնը կը տիրէր, Նդուարդը իր ընկերներուն մէջ երթալով երևելի կըլլար: Ամպէր զօրապետը իր հարազատ եղբօրը պէս կը սիրէր զանհկայ, չէ թէ միայն ամէն օր ըրած ծառայութիւններուն համար, հապա նաև անոր քաջութեանը ու հաւատարմութեանը հա-

մար: Եդուարդն ալ երնեկ կուտար
ինքն իրեն այնպիսի ազնիւ զօրա-
պետի մը քովը ըլլալուն համար. և
իրաւ որ Լամպէրն ալ Աիքթոնէն
վար չէր մնար Եդուարդին վրայ
ցցուցած սիրովը, ու հօր պէս անոր
վրայ կը գուրգուրար:

Մէկ իրիկուն մը երբոր անգղիա-
ցւոց բանակը հանդարտ կեցեր էր,
մէյմըն ալ զօրապետին փոխանոր-
դը եկաւ իմացուց անոնց՝ որ վա-
ղուան օրը արևը ծաթածին պէս
թշնամիները վրանին պիտի յարձը-
կին, ուստի պատրաստ եղիք որ
դէմ դնէք ըսաւ: Եդուարդին գուն-
դը աս բանս իմացածնուն պէս՝ ա-
մէն մարդ սկսաւ իր զէնքը պատ-
րաստել:

Արևը հազիւ թէ լերան զլուխը
հասեր էր՝ մէյմըն ալ թշնամիներ
ըուն բանակէն թնդանօթի ձայներ
լսուեցան՝ որ յարձըկելու նշան էր:
Մէկ վայրկեանի մէջ անգղիացւոց
զօրքերը պատրաստուեցան, և խոր
լռութիւն մը պատեց այնչափ բազ-

մութեան մէջ: Առջի հրամանը եղածին պէս բոլոր գունդերը միատեղ շարժեցան, և առանց վախնալու թշնամեաց դիմացը վազեցին ու կռիւք սկսաւ: Զօրապետը շատ կը զարմանար Եդուարդին քաջութեանը վրայ, և զինքը իր քովէն չէր հեռացընէր:

Խել մը ատեն սաստիկ կռուելէն ետքը՝ գունդերը իրար խառնուեցան. անով ալ մէկմէկու չէին կրնար յաղթել. նոյն ատենը զօրավարն ու զինուորը իրարմէ չէին որոշուեր, և ամէնքն ալ սրին բերանը կերթային. իսկ խառնուելու ատեննին զարհուրելի բան էր, չէր զիտցուեր թէ ո՞ր կողմը պիտի յաղթէ՝ ու ո՞ր կողմը պիտի յաղթուի: Երբոր անգղիացիք բոլոր ուժերնին կը թափէին, Եդուարդին զօրքերն ալ սոսկալի ջարդ ընելով առաջ կերթային, մէյմըն ալ Լամպէր զօրապետն ու իր ընկերները թշնամիներուն ձիաւորներէն պաշարուեցան: Եդուարդը աս բանս տեսաւ:

ճին պէս՝ մէկէն սիրտ առաւ երե-
սուն զինուորով թշնամիներուն վը-
րայ յարճըկեցաւ ու սկսաւ չարա-
չար կրակ թափել վրանին: Չիա-
ւորներուն զօրապետը գերի ըն-
կաւ, զինուորներն ալ իրենց գըլ-
խուն մնալով՝ խել մը ատեն քա-
ջութեամբ իրենք զիրենք սլաշտպա-
նեցին, բայց կարգերնին աւրուե-
լով ցիրուցան եղան:

Եդուարդը կատղած ետևնուն
ընկաւ, բայց հրացանի գնտակէ մը
զարնուելով՝ աջ թևը կտարեցաւ՝
ընկաւ մնաց: Խեղճը մէկէն ինք-
զինքը կորսունցուց, սլակունքները
կծկուեցան, ու որչափ որ ջանա-
ցին՝ վազած արիւնը չկրցան բռնել.
ամէնքը յուսահատեցան ու ան-
շուշտ կը մեռնի կըսէին: Երբոր
խռովութիւնը հանդարտեցաւ և
թշնամիները ետ քաշուեցան, սկը-
սան խեղճին վրայ քիչ մը հոգ տա-
նիլ: Բերին զինքը Լամպէր զօրա-
պետին վրանը, վիրաբուժներուն
գլխաւորը կանչեցին, ան ալ վէրքը

զննեց ու տեսաւ որ մեռնելու վը-
տանգ չկայ, և խօսք տուաւ որ զա-
նիկայ կ'առողջացընէ և սկսաւ վրան
մեծ հոգ տանիլ: Երբոր Եդուարդ
աչքը բացաւ առջի խօսքը աս եղաւ.
« Ով մարիկ, Աստուած իմ ողորմէ
իմ հոգւոյս և թողութիւն տուր
մեղքերուս » . ու ցաւէն ուրիշ բան
չկրցաւ գրուցել:

Լամպէր զօրապետը շատ ուշ ի-
մացաւ իր հաւատարիմ ու սիրելի
Եդուարդին գլխուն եկած փոր-
ձանքը. վասն զի անոր ընկած ա-
տենը ինքը դեռ թշնամեաց հետ կը
պատերազմէր իր քովը մնացած
զօրքերովը, և ան կողմերէն խել
մը տեղ հեռացեր էր. դառնալու
ատեն երբոր լսեց աս բանս՝ իրեն
լուր բերող գինուորններուն տըրտ-
մութենէն վախը աւելի սաստկա-
ցաւ՝ որ չըլլայ թէ գէշ բան մը հան-
դիպած ըլլայ: Վազեց վրանը մը-
տաւ և խեղճ վիրաւորուածին վը-
րայ ընկնելով ըսաւ. « Սիրելի Ե-
դուարդս, աս ինչ ձուն էր որ գըլ-

խուս եկաւ. խեղճ տղայ, դուն որ խմ կեանքս ազատեցիր՝ ինչպէս ես ալ քու կինդ չկրցայ ազատել »:

Եդուարդը գլուխը քիչ մը վեր վերցուց և ձեռքը Վամպերին երկընցուց: Կ'ուզէր հետը խօսիլ, բայց վրան ուժ չէր մնացած. պաղ քրտինք մը իջաւ վրան, և արիւնը նորէն սկսաւ վազել: Վիրաբոյժը կանչեցին. ան ալ ապսպրեց որ ամենևին տեղէն չչարժի ու չխօսի: Զօրապետին ալ ապսպրեց որ բաներ հարցընելով զանիկայ չյոզենեցընէ. ու նորէն պատուիրեց որ առջի յանձնած դեղերը չմոռնան:

Հիւանդը այնպէսով զանգստացաւ և քիչ մը աղէկցաւ, իրեք օրէն ետքը վիրաբոյժը խօսք տուաւ զինքը բոլորովին առողջացընելու: — « Փա՛ռք Աստուծոյ, կանչեց զօրապետը ուրախութեամբ, որ այսպիսի քաջ զինուորի մը կեանքը մեզի պիտի շնորհէ »:

Եդուարդը օրէ օր ըռընտնալու վրայ էր, և ուժը կամաց կամաց

տեղը կուգար, թէպէտ և աջ թևը միշտ տկար մնաց. վերջապէս Լամպերին հոգովը բոլորովին առողջացաւ: Իրեն ընկերներն ալ հիւանդութեան ատենը անդադար զինքը տեսնելու կուգային և իրենց սէրը կը յայտնէին:

Եդուարդին վէրքը թէպէտ և ըռնացաւ, բայց թևին տկարութեանը համար ալ զինուորական աշխատանքներու չէր կրնար գալ. քանի որ իր մայրը միտքը կուգար շատ կը արտմէր, և իր ընկերներէն հեռանալով առանձին տեղուանք կը քաշուէր, և շատ անգամ աղբիւրի պէս արցունք կը թափէր: Զօրապետը թէպէտ և անոր ատեն ատեն ըրած հառաչանքը կը լսէր, բայց չէր գիտեր թէ աս մաղձոտութիւնը ինչէն առաջ կուգայ:

Օր մը երբօր Եդուարդը վրանին դրանը գիմացը մինակ նստած՝ իրեն ընկերներուն երգած իրլանտայի խաղերը մտիկ կընէր, մէյմը

ալ դօրապետը անոր քովը եկաւ ու ըսաւ. «Եդուարդ, ինչո՞ւ հոս տեղս մինակ կեցեր ես, ինչո՞ւ ընկերացդ հետ չես ուրախանար. որչափ ատեն է որ դքեզ տրտում տխուր կը տեսնեմ. քու գլխէդ նորէն բան մը անցած պիտի ըլլայ, ու փուճ տեղը ինձմէ կը ծածկես: Ատ տըրտում կերպովդ զիս ալ անհանգիստ կընես. զրուցէ նայինք ինչ է պատճառը »:

Աս խօսքերէն Եդուարդին աշուրները լեցուեցան. « Թէ որ բոլոր աս բանակին մէջ սրտակից մարդ մը ունիմ' նէ՛ դուն ես, ըսաւ. որ իմ հիւանդութեանս ատենը այնչափ ինձի սէր ցցուցիր. ես շատոնց կը յայտնէի քեզի իմ ցաւս, թէ որ դքեզ ալ տրտմեցընելէն չվախնայի: Իրաւ որ իմ վէրքս բժշկուեցաւ, բայց ուրիշ խոց մը բացուեցաւ իմ սրտիս մէջը. այլ իմ պարտքս զիս կը ստիպէ որ աս ցաւիս ալ քաջութեամբ համբերեմ. թէպէտ և գիտեմ որ աս անդար-

մանելի ցաւս զիս պիտի գերեզման
իջեցընէ՝ ըսելով՝ սկսաւ արցուն-
քը սրբել :

Զօրապետը նստաւ անոր քովը ,
ու ձեռքէն բռնելով ըսաւ . « Ե-
դուարդ , դուն չես հաւտար որ ըզ-
քեզ աչքիս պէս կը սիրեմ , և ա-
մէն ուզածդ բոլոր սրտանց կատա-
րելու պատրաստ եմ . ուրեմն զուր-
ցէ տեսնեմ » : — « Զէ , բարեկամ ,
ամենեւին տարակուսած չեմ քու
սիրոյդ վրայ » : — « Ուրեմն ինչո՞ւ
ծածուկ կը պահես , ինչո՞ւ համար-
ձակ չես յայտներ քու տրտմու-
թեանդ պատճառը » :

« Ուրեմն աղէկ , որովհետեւ կը
բռնադատես զիս ահա զրուցեմ .
քանի որ միտքս կու գան մայրս ու
խեղճ հայրենիքս՝ սիրտս կէրի կը
մրկի . մանաւանդ որ ասկէ ետքը
զինուորութիւն ալ չեմ կրնար ը-
նել . վասն զի աջ թևս ալ թող չը-
տար որ զէնք գործածեմ . իմ ըն-
կերներուս հետ քաջութիւն ընելու
տեղը , հարկ պիտի ըլլայ որ աս

վրանին մէջ պարապ նստիմ. մէկ
կողմանէ ալ կը վախեմ որ չըլլայ
թէ հրամանքիդ ալ ծանրութիւն ըլ-
լամ: Ես հոս տեղս բանի մը չգալէն
դաս, անդին պառաւ մայրս ալ ար-
ցունք թափելով կը հալի կը մաշի,
եղբայրս ալ փուճ տեղը իմ դառ-
նալուս կը սպասէ: Խելքս միտքս
Իրլանտայի վրայ է, դիշեր ցորեկ
ուրիշ բան չեմ տեսներ՝ բայց եթէ
իմ ծնած երկիրս, ան ձորն ուր որ
կ'երթայի ձուկ բռնելու համար, և
ոչխարներուն խումբը՝ որ այնչափ
ատենէ 'ի վեր դարմաներ էի: Ա-
մէն որ աղօթքիս մէջ այսպէս կա-
ղաչեմ. Աստուած, դուն հասցու-
ղիս իմ հայրենիքս, որպէս զի կա-
րենամ նորէն տեսնել իմ հօրս
խրճիթը. վասն զի քանի որ անկէ
հեռու եմ՝ ինծի համար երջանկու-
թիւն չկայ: Ահա աս է իմ տրամու-
թեանս պատճառը. արդեօք պիտի
կատարուի՞ սրտիս փափաքը»: —
« Կը յուսամ, կը յուսամ, ըսաւ
Լամպէրը ու ելաւ դնաց: »

Աս խօսքերս ըլլալէն 'ի վեր՝ օրեր
անցեր էին, մէյմըն ալ Լամպէրը
Եղուարդը կանչեց ու ըսաւ. «Քու
հայրենիքդ դառնալու փափաքը իմ
սիրտս շատ ցաւեցուց, և ան ատե-
նէն 'ի վեր որ սիրտդ ինծի բացիր,
խնդիրքդ կատարելու շատ ետեէ
եղայ. վերջապէս Աստուծոյ օգ-
նութեամբը ու բարեկամներու
միջնորդութեամբը ամէն դժուա-
րութեանց յաղթեցի, թէպէտ և
ինծի շատ սուղի պիտի նստի աս
բանս, որովհետեւ ասկէ ետքը ի-
րարմէ պիտի բաժնուինք: Ա՛ռ աս
թուղթը՝ ասիկայ է քու ազատու-
թեանդ հրամանը՝ որ բանակին ե-
րևելի զօրապետներուն ալ ստո-
րագրել տուի: Ասկէ ետքը զինուո-
րութենէ ազատ ես, և ուղած ա-
տենդ կրնաս իրլանտայ դառնալ »:

« Ասանկ բան ալ կըլլայ եղեր,
կանչեց Եղուարդը ուրախութե-
նէն բոլորովին այլայլելով: Ո՛վ
մարիկ, նորէն զքեզ պիտի կարե-
նամ եղեր տեսնել... Դուն ալ,

սիրելի զօրապետս, ընդունէ իմ
չնորհակալութիւնս քուկին ինծի ը-
րած բարերարութիւններուդ հա-
մար, դու էիր որ զիս մահուընէ ա-
զատեցիր, անոր համար միշտ ե-
րախտագէտ պիտի ըլլամ քեզի »:

« Ազատութենէդ զատ մտածեցի
այնպիսի բան մըն ալ ընել որ աս-
կէ ետքը հանգիստ կարենաս ապ-
րիլ, ըսաւ զօրապետը. Ռիքթոն
զօրապետն որ Նոնտրա պատերազ-
մի իշխան է, քուկին խնդիրքդ
տեղնիտեղը իմանալով՝ քեզի ե-
կամուտ մը պիտի կապէ. ուստի
երբոր մայրաքաղաքը հասնիս՝ գնա՛
դինքը գտիր. ինքը պատրաստ է
քեզի օգնելու. ես ալ ձեռքէս
եկածին չամի կը ջանամ որ քու
բաներդ աղէկ առաջ երթան :
Երթաս բարով. գնա երջանկու-
թեամբ անցու քու օրերդ ընտա-
նեացդ մէջ, թերևս հոն վէրքդ ալ
աւելի դիւրաւ կրնայ բժշկուիլ. եր-
թաս բարով »:

Եդուարդ ուրախութենէն ինչ

ընելիքը շէր գիտեր, և կարծէր թէ
երազ կը տեսնէ. այնչափ ուրա-
խացեր էր որ երբ իրիկուան
դէմ իր ընկերները տեսան զինքը՝
կըսէին իրեն. « Ի՞նչ բանի համար
այսչափ ուրախացեր ես, մօրմէզ
նամակ առիր »: — « Նամակը ուր
կը մնայ, ըսաւ Եղուարդը. հիմա
անոնց քովը պիտի երթամ, ազա-
տութեան զիր առի »: — « Մենք
ալ քու երջանկութեանդ վրայ ու-
րախակից կըլլանք, ըսին անոր ըն-
կերները, թէպէտ և քեզմէ բաժ-
նուիլնիս մեծ ցաւ է մեզի »:

Երկու օրէն ետքը Եղուարդը ա-
ռաւօտը կանուխ զօրապետին վրա-
նը գնաց՝ ու խմացուց անոր որ հի-
մա ճամբայ պիտի ելլէ: Ան ալ նըս-
տեցուց զանիկայ իր քովը՝ ու մէկ-
տեղ նախաճաշիկ ընելէն վերջը,
« Աստուած բարի ճամբայ տայ, ը-
սաւ, ու այնպիսի երջանկութեամբ
ընես աս ճամբորդութիւնս, ինչ-
պէս որ ես ինձի համար կը փափա-
քիմ: Աս թուղթն ալ ան ու երբոր

Լոնտրա հասնիս՝ իմ եղբօրս Լամպէր վաճառականին տուր. դքեղ իրեն կը յանձնեմ, որպէս զի իմ զաւկիս պէս վրադ հոգ տանի. ինքը քովը կառնու գքեղ՝ ինչուան որ իրլանտայ դառնալու յաջող դիպուած մը հանդիպի: Ողջ կեցիր սիրելի Եդուարդս, շնորհակալ եմ քու ըրած ծառայութիւններուդ. Աստուած գքեղ ողջ առողջ քու տեղդ հասցունէ »:

Եդուարդը սկսաւ լալ, Լամպէրին սիրտն ալ ելաւ. քիչ մը ատեն լուռ կենալէն ետքը՝ զօրապետը սկսաւ այսպէս ըսել. « Յուսամ որ աս աշխարհքիս մէջ ալ նորէն կը տեսնուինք. և թէ որ աս պատերազմէս ողջ առողջ դառնամ, որ մը գործքով պիտի ցցունեմ թէ չեմ մոռցած ամենեին քեզի ունեցած պարտքերս: Աս քսանըհինգ լիրէ ստէրլինն ալ ճամբան քեզի պէտք կրնայ ըլլալ »:

Զօրապետը ինչուան բանակէն դուրս Եդուարդին հետը գնաց.

չատ զինուորներ ալ մէկտեղ եկան իրենց յիսնապետին վերջի բարևը տալու համար, և բարեկամաբար պագտուեցան: « Երթաս բարով, ըսաւ Լամպերը՝ ու աչուրները արցունքով լեցուեցան, ես դքեղ ամենևին չեմ մոռնար »:

Իրլանտայի զինուորները խել մը տեղ ալ իրեն հետը գնացին, Եդուարդն ալ անոնց ետքի բարևը առնելէն ետև մինակ ճամբայ ելաւ, ու Նաւարրայէն, Պիսքալիայէն անցնելով հասաւ Սուրբ Սեբաստիանոսի նաւահանգիստը. հոն տեղէն նաւ մտաւ դէպ ՚ի հայրենիքը երթալու համար: Զինուորական ծառայութենէն ազատելուն վրայ այնպէս ուրախացեր էր՝ որ ամենևին մտքէն չէր անցներ ծովու ճամբորդութեան դժուարութիւնները:

ԳԼՈՒԽ ԺԲ

Եղուարդին Լոնտրա հասնելը:

Սպանիայէն ելլելէն քանի մը չաբաթ ետքը՝ Եղուարդը Լոնտրա հասաւ: Շատ անգամ հարցուց Լամպէր վաճառականին տանը համար, բայց մարդ մը չեղաւ որ իրեն ցուցրնէ. փողոցներուն մէջէն անցնելու տեսն՝ ամէն տներուն անունը կը կարդար, որպէս զի նայի թէ արդեօք դրան մը վրայ ալ Լամպէրի անունը գրած կայ թէ չէ: Շատ սլըտըտելէն վերջը տեսաւ որ փառաւոր տան մը դրան դիմացը՝ աղնուական մարդ մը կեցեր թուղթ մը կը կարդար. Եղուարդը բարև տուաւ մարդուն, անիկայ ալ քաղաքավարութեամբ բարևը առնելով՝ հարցուց թէ ինչ կուզէ: «Պա-

րոն, ըսաւ, Լամպէր վաճառակա-
նին՝ եղբօրը կողմանէ թուղթ մը
ունիմ տալու՝ որ Սպանիա իրլան-
տացի զօրքերուն զօրապետն է,
բայց չեմ գիտեր թէ որն է իրեն
տունը»։ — «Սսիկայ է Լամպէր
զօրապետին տունը. անոր եղբայրն
ալ ես եմ, ըսաւ մարդը»։ Եդուար-
դը շատ ուրախացաւ զինքը գտնե-
լուն համար, որ երկայն ատեն
փնտուեր էր. երբոր կուղէր մախա-
ղը բանալ որ թուղթը մէջէն հանէ,
« Ինչո՞ւ ճամբուն մէջը կը բանաս,
ըսաւ վաճառականը, ներս մտի սե-
ղանին վրայ դիր զանիկայ, ու քու
դիւրութեամբդ բաց »։

Եդուարդը ներս մտաւ ու մա-
խաղը սեղանին վրայ դնելով բա-
ցաւ, ու թուղթը հանեց անոր տուաւ։
Երբոր վաճառականը աս նամակը
կը կարդար, Եդուարդը պառաւ
խաթուն մը տեսաւ՝ որ մարդուն
հօրաքոյրն է եղեր. աս խաթունը
ներս մտաւ ու վաճառականին ա-
կանջէն վար բան մը զրուցեց։

Քիչ մը ատենէն ետև վաճառա-
կանը դարձաւ ու Եդուարդին վիզը
պըլլուելով՝ ըսաւ. « Աս ինչ բաղդ
է որ դքեղ կը տեսնեմ հոս տեղս.
Երնէկ ինձի որ իմ տանս մէջ տե-
սայ ծեր Գաստոնին զուակը՝ որ
իմ եղբօրս կեանքը խալըսելու հա-
մար իր կեանքը զոհ ըրաւ:

Պառաւ կնիկն ալ ապշած կը
նայէր, բայց անոր ըսածներէն բան
չէր հասկընար: Ա երջապէս վաճա-
ռականը իր հօրաքրոջն ալ իմացուց
թէ Եդուարդը Գաստոնին տղան
է: « Մտիկ ըրէ խաթուն, տես թէ
եղբայրս Սպանիայէն ինչ բաներ
կը գրէ ինձի » ըսելով՝ բարձր ձայ-
նով կարդաց աս նամակը, որուն
մէջ Եդուարդին վրայ ալ շատ դո-
վեստներ կային:

« Սիրելի եղբայրս :

« Աս թուղթը քու ձեռքդ յանձնող յիսնապետը՝ ան բարի ծերուն տղան է՝ որ անգամ մը իմ կեանքս Տրպլինի նաւահանգստին մէջ ազատեց: Ար խնդրեմ որ զինքը քու քովդ առնես և վրան աղէկ աչք ունենաս, ինչուան որ յարմար ատեն մը գտնէ Իրլանտայ դառնալու: Հրամանքդ աս բանիս համար ալ երախտազէտ պիտի ըլլաս իրեն՝ որ ինքն ալ զիս թշնամեաց ձեռքէն ազատեց՝ Սպանիա հասած ատենս, որ կուզէին զիս ալ բռնել ու սպաննել: Աս բանիս համար ես իմ կեանքս ալ իրեն պարտրկան սեպելով՝ հանգիստ չեմ կրնար ըլլալ, ինչուան որ չիմանամ թէ ողջ առողջ իր տեղը հասեր է, ու իր ծնողաց կարօտը առեր է, որուն այնչափ կը փափաքէր:

« Ինքը առաքինի ու աշխատասէր տղայ մըն է. իրեն վրայ գովա-

սանքէ զատ ուրիշ բան չունիմ ըսելու. ինծի մեծ ցաւ եղաւ իրմէ բաժնուիլս. վասն զի ինծի այնպիսի բարիքներ ըրած էր՝ որ հազիւ թէ եղբայր մը իր եղբօրը համար կ'ընէ. ուրիշ շատ բանի մէջ ալ յայտնի ցցուց իր սէրն ու հաւատարմութիւնը: Աս բաներուս համար պէտք է իրեն երախտագէտ ըլլանք, և կաղաչեմ որ Եդուարդը սիրելի բարեկամիս պէս ընդունիս:

« Զիս որ հարցընես՝ ողջ առողջ եմ. շատ անգամ թշնամեաց հետ զարնուեցանք, բայց փառք Աստուծոյ, ինչուան հիմա դեռ մնաս մը չեղաւ ինծի. մեր ըրած քաջութիւններուն վրայօք օրագիրներուն մէջ կրնաս կարդալ, ուստի խօսքս չեմ ուզեր երկընցընել: Ե՛րբ պիտի ըլլայ որ դքեզ նորէն տեսնեմ, ու մէյմըն ալ քեզմէ չբաժնուիմ: Իմ կողմանէս Ռիքթոն զօրապետին բարեւ ընելու շնորհնաս՝ որ կարծեմ թէ Եդուարդը տեսնելով շատ պիտի ուրախանայ: Մնաս բարով սի-

րելի եղբայրս և զիս ամենեին չըմոռնաս. ես ալ նոյնպէս զքեզ չեմ մոռնար. մեր սիրելի հօրաքրոջն ալ շատ շատ բարեւ ընես:

Սիրելի եղբայրդ

Լամպէր զօր • բան • իրլանտ » :

Վաճառականը թուղթը թողուց Եղուարդին ձեռքէն բռնեց ու ըսաւ. « Կը տեսնես սիրելի, ինչ բաներ գրեր է ինծի եղբայրս քու վրայօքդ: Ես ալ շատ շնորհակալ եմ քեզի՝ իրեն ըրած ծառայութիւններուդ համար: Աստուած իր առատածեռնութեամբը քեզի հատուցանէ, վասն զի մեր ըրածը քու ըրածներուդ քովը պզտի բան մըն է: Եկու մեզի հետ անցու քու ատենդ որչափ որ կուզես. ես ալ ամենայն կերպով կը ջանամ որ Լոնտրայի զուարճալի տեղերը զքեզ պտըտցընեմ »:

Եղուարդը շատ զարմացաւ վաճառականին աղնուական կերպին

վրայ, և ըսաւ անոր. « Շատ շնորհակալ եմ Պարոն, քու ըրած բարիքներուդ համար. ո՛ւր էր թէ կարենայի շուտով մը ծնողացս տունը դառնալ. վասն զի թեև խոցն ալ դեռ չանցաւ, և կը վախնամ որ չըլլայ թէ ասդիս անդին տնտնալուս աւելի սաստկանայ, ու հրամանքիդ ալ նեղութեան պատճառըլլամ »:

« Շատ աղէկ, ըսաւ վաճառականը, ես ալ ատ կը փափաքիմ որ որչափ կարելի է նէ շուտով տեսնես քու ծնողքդ. բայց գիտցիր որ էն քիչ տասնըհինգ օրէն առաջ ճամբայ չես կրնար ելլել. վասն զի քիչ տտենէն իմ նաւերէս մէկը Տըպլին պիտի երթայ. միայն թէ տասնըհինկ օրէն հազիւ կրնայ պատրաստուիլ. քիչ մը համբերէ, մի վախեր շատ չես ուշանար »: Ադուարդը հաւանեցաւ աս խորհրդին և կը ջանար որ իրեն ընկած ծառայութիւնները ընէ:

Նոյն իրիկունը Նամպէրը կառ-

քին ձիերը լծել տուաւ, և Եղուարդին հետ մէկտեղ՝ ելան Ռիթթոն զօրապետին գնացին: Ասիկայ զինքը տեսնելուն պէս ապշեցաւ մնաց, և զիրենք իրիկուան կերակուրի բռնեց, կէս գիշերուն տուն դառնալու ատեն Եղուարդը խոտտացաւ Ռիթթոնին որ ամէն օր մէկ մէկու հետ տեսնուին:

Ասանկով զօրապետն ու վաճառականը կը ջանային որ զինքը զուարճացընելով ուրախ պահեն, բայց անիկայ քանի որ իր մայրն ու եղբայրը կը յիշէր՝ հառաչելով կըսէր. «Ես հոս տեղս ինչ ուրախութիւն ալ ունենամ՝ ամենեին աչքիս բան չեն երևնար, ինչուան որ չկոխեմ Իրլանտայի գետինը և նորէն իմ հօրս տնակը չտեսնեմ՝ ինքզինքս երջանիկ չեմ սեպեր: Ա՛հ, ինչպէս պիտի ուրախանայ արդեօք իմ մայրս՝ երբոր իմ ձայնս լսէ. ես ալ ինչ սիրով իրեն վիզը պիտի պըլլուիմ »:

ԳԼՈՒԽ ԺԳ

Եդուարդին գլխուն եկած փորձանքը :

Վաճառականին նաւը ուշանալուն համար՝ հարկ եղաւ որ Եդուարդը երկայն ատեն Վամպերին քովը անցընէ. և որպէս զի դատարկ չկենայ, ու իրեն բարերարին ալ ծանրութիւն չըլլայ, ամէն օր անոր խանութը կերթար ու հոն տեղը կաշխատէր : Վամպէր շատ անգամ մեծամեծ գործքեր կը յանձնէր իրեն, ինքն ալ ամենայն ջանքով ու խոհեմութեամբ կը կատարէր. աս կերպով Եդուարդը Վամպերին այնչափ աչքը մտաւ՝ որ կուղէր զանիկայ իր քովը պահել, թէ որ չտեսնէր խեղճ երիտասարդին իր ընտանեաց սիրովը հալիւն ու մաշիւր :

Օր մը Լամպէրը ծանր կապոց մը տուաւ Եդուարդին որ վաճառա- կանի մը տունը տանի, որ Լոնտ- րայի մէկ ծայրը կը բնակէր. ապրս- պրեց ալ որ ուրիշի չտայ զանիկայ, հապա տանտիրոջը ձեռքը յանձնէ,

Եդուարդը շուտ մը կապոցն ա- ռաւ ու գնաց. բայց այնչափ ծանր էր՝ որ քիչ մը յողնութիւն առնելու համար շատ անգամ ասդին անդին կանկ կառնէր, ինչուան որ Վէսթ- մինսթրի երևելի կամրջին վրայ հասաւ. հոն ալ քիչ մը ատեն հանգչելէն ետե՛ նորէն շալկեց կա- պոցն ու սկսաւ երթալ. բայց հա- զիւ թէ քիչ մը առաջ գնացեր էր, ժողովուրդը զինքը հրելով հրմշտը- կելով դէպ ՚ի կամրջին ծայրը ձգե- ցին, կապոցն ալ ձեռքէն ելաւ. շատ ջանաց որ բռնէ, բայց ճար չե- ղաւ, գետին մէջը ընկաւ. ան ա- տեն սկսաւ պօռալ կանչել. բայց ինչ օգուտ. կապոցը ընկաւ Թա- միզ գետին մէջը ու տակը գնաց:

Առանց ատեն կորսունցընելու

գետին եղերբը իջաւ, զգեստներն
ու գլխարկը ձգեց, ու գետին մէջ
ցատքեց ու սկսաւ լողալով դէպ 'ի
ան կողմը երթալ՝ ուր որ կապոցը
ընկեր էր. երկայն ատեն ջրին մէջ
լողաց ու փնտռեց, բայց բան մը
չգտաւ: Երբոր տեսաւ որ ուժն ալ
կտրեր է՝ ջրէն դուրս ելաւ, և ա-
չուրները արցունքով լեցուած՝ ըզ-
գեստները հագաւ, գլխարկը գլու-
խը դրաւ և սկսաւ կամաց կամաց
դէպ 'ի Ղամպէրին խանութը եր-
թալ:

Ղամպէրը զարմացաւ ասանկ շու-
տով դառնալուն վրայ, և անոր
տրտմութենէն և զգեստներէն վա-
զած ջրէն իմացաւ որ փորձանք մը
հանդիպեր է: «Ի՞նչ կայ Եգուարդ,
ըսաւ, ինչո՞ւ համար զգեստներդ
խխում կտրեր են»: Եգուարդը
պարզսրտութեամբ ու անմեղու-
թեամբ սլատմեց անոր իրեն գըլ-
խուն եկածը: «Տէր Աստուած, ը-
սաւ վաճառականը, ինչ ձուն էր որ
գլխուս եկաւ, ան կապոցին մէջ

չատ սուղ բաներ կային: Ես գիտեմ որ դուն աս բանիս մէջ յանցանք չունիս, բայց բանը վաճառականը համոզելն է. վասն զի աս կապոցին տէրը դաժան մարդ մըն է. գիտեմ որ պիտի չհաւտայ մեր խօսքին, և մեր գլխուն փորձանք պիտի բանայ. բայց որպէս զի շուտով աս բանիս դէմը առնունք ու մենք մեր կողմանէ ապահով ըլլանք՝ եկ հիմա մէկէն ելլենք իրեն երթանք. ես քու կողմանէդ կը խօսիմ »:

Եդուարդը զգեստները փոխեց և Վամպէրին հետ մէկտեղ շուտ մը ելան գնացին վաճառականը գրտնելու. խեղճ Եդուարդին սիրտը այնպէս սաստիկ կը նետէր՝ որ կարծես թէ մեծ յանցանք մը ըրեր է: Երբոր հասան վաճառականին տունը՝ Վամպէրը ինչ որ հանդիպեր էր պատմեց անոր. բայց եկո տես որ վաճառականը ամենևին խօսք չէր հասկընար. աս մարդը վաչխառու ծեր մըն էր՝ որ այսպիսի դի-

պուլածներով խեղճ մարդկանց ունեցածը չունեցածը կը կողոպտէր: Խել մը ատեն աչուրները Եդուարդին վրայ տնկելով նայելէն ետքը՝ դարձաւ Լամպէրին ըսաւ. « Փուճ տեղը կը գովես աս տղան՝ որ դեռ մէկ երկու օր է քանի որ խանութդ մտեր է. շիտակը կուզես նէ ասիկայ կասկածելի մարդ մը կերևնայ ինձի, և կրնայ ըլլալ որ աս պատմութիւնն ալ իր քովէն հնարեր է դիս խաբելու համար »:

« Պարոն, ըսաւ Լամպէրը, մեծ անիրաւութիւն կընես աս մարդուն առաքինութեանը վրայ կասկածելովդ. ես ճանչցեր եմ իրեն առաքինութիւնը, և դիտցած ըլլաս որ ես որ և իցէ մարդու վրայ չեմ վստահիր, թող որ շատ անգամ քու կապոցէդ աւելի սուղ բաներ յանձներ եմ իրեն, և մէկ անգամ մըն ալ չեմ խաբուած: Աս դիպուածով քեզի ինչ վնաս որ եղաւ նէ՛ ես իմ կողմանէս պատրաստ եմ հատուցանելու »:

«Քու խօսքերովդ դիս չես կրնար
համոզել, ըսաւ վաճառականը, և
թէպէտ բոլոր հարստութիւնդ ալ
ինծի տաս՝ չես կրնար իմ սիրտս
առնուլ: Ես դատաստանի պիտի
ելլեմ, հոն տեղը կիմանաս թէ ատ
մարդուն վրայ վստահիլ պէտք է
եղեր թէ չէ: Թէ որ իրեն անմեղու
թիւնը յայտնուի՝ բան մը ալ չեմ
ուզեր, կապոցին կորսուելուն վրայ
ալ չեմ մեղքընար. իսկ թէ որ ընդ-
հակառակն յանցաւոր ելլէ՝ կու-
ղեմ որ արդարութիւնը տեղը եր-
թայ, ու աս անդգամը բանտի մէջ
անօթի ծարաւ մեռնի. դուն ալ
պարտական ըլլաս կապոցին աժող-
չէքը տալու, որպէս զի մէյմըն ալ
չճանչցած մարդիկներդ քովդ չառ-
նես ու վրանին չվստահիս »: Աս ը-
սելով ու խոլոր մոլոր անոնց վրայ
նայելով՝ ելաւ գնաց. Լամպէրն ու
Եդուարդն ալ իրենց տեղը դար-
ձան:

Հաղիւ թէ ժամ մը անցեր էր,
մէյմըն ալ դատաւորին մարդիկնե-

րէն երկու հոգի եկան ու Եդուարդը կը փնտռէին: Անիկայ ալ համարձակ դիմացնին ելաւ. Լամպէրն ալ սիրտ տալով իրեն՝ ըսաւ. «Մի վախեր, Աստուած դքեղ ձեռքէ չթողուր: Ես ամենեւին չեմ տարակուսած քու անմեղութեանդ վրայ. հարկ ըլլայ նէ ես ալ քեզի կ'օգնեմ, և ձեռքէս եկածին չափ ջանք կրնեմ դքեղ չար ծերուն ձեռքէն ազատելու համար: Գնա՛ սիրելի, դատաւորներուն դիմացը համարձակ կեցի. յանցաւորը միայն պէտք է վախնայ դատաւորին նայուած քէն »:

« Ես պզտիկուց 'ի վեր միտքս այսպէս դրեր եմ որ, ըսաւ Եդուարդը, Աստուծոյ շնորհքէն ետքը՝ մարդուս էն մեծ հարստութիւնը ուրիշներուն դիմացը հաւատարիմ գտնուիլն է. ես ալ միշտ աս հարստութիւնը ձեռք ձգելու ջանացեր եմ, ուստի մարդկանց դատաստաններուն դիմացը ելլելու չեմ վախեր. միտքս դրեր եմ որ

Թէպէտ անոնք զիս դատապարտեն, Աստուած զիս կարգարացընէ: Ինչպէս որ Թշնամւոյն հրացաններէն չվախցայ, ասանկ ալ դատաւորին քննութենէն պիտի չվախնամ. շատ անգամ Սպանիայի մէջ մահուան հետ կռուրտեցայ, ևս առաւել չեմ վախնար իմ հայրենեացս մէջ. իմ մխիթարութիւնս միայն անմեղ ըլլալս է »:

Դատաւորին մարդիկները Եդուարդը առին դատաստանարանը տարին. Լամպէրն ալ գնաց Ռիքթոն զօրավարը գտնելու, որպէս զի այ բանիս ճար մը ընեն:

ԳԼՈՒԽ ԺԴ

Անիրաւ դատաստան :

Երբոր Եդուարդը դատաստանարանը մտաւ, տեսաւ որ կորսուած կապոցին տէրը հոն է: Աս մարդս առաջուց դատաւորին սիրտը իրեն քաշեր էր, և Եդուարդին վրայ ալ այնչափ զրպարտութիւններ ըրեր էր՝ որ խեղճ տղուն երեսը նայող չեղաւ. դատաւորը խիստ ճայնով մը հարցուց թէ դուն ո՞վ ես: — « Ես Եդուարդ Գաստոնեան կ'ըսուիմ, ըսաւ, և Իրլանտայի բանակին յիսնապետներէն մէկն եմ, պատերազմի մէջ առած վէրքերուս համար ազատութեան թուղթ ալ ունիմ »: — « Հապա Լոնտրա ինչ բան ունիս, ինչո՞ւ համար եկեր ես »: — « Ես աս քաղաքս եկեր եմ

Լամպէր վաճառականին մէկքանի
թղթեր տալու համար իր եղբօրը
կողմանէ՝ որ Սպանիայի բանա-
կին զօրասպետն է. նաւու մը կը
սպասեմ որ ելլեմ իմ երկիրս եր-
թամ» : — « Գիտես ի՞նչ բանի հա-
մար գրեզ կանչեցի » : — « Որոշ-
չեմ գիտեր՝ բայց աս մարդը վրաս
զրպարտութիւն ըրած պիտի ըլլայ՝
ըսելով թէ ես գողցեր եմ իրեն
դրկուած կապոցը » :

Վաճառականը պատասխան պի-
տի տար, բայց դատաւորը նշան ը-
րաւ որ լռէ, և նորէն Եդուարդին
դառնալով « Իրաւ, ըսաւ, քու վը-
րադ ամբաստանութիւն մը կայ թէ
կապոց մը գողցեր ես՝ որ Լամպէր
վաճառականը քու ձեռքովդ աս
պարոնին կըղրկէ եղեր : Ան կապո-
ցին մէջ շատ սուղ բաներ կան ե-
ղեր. աս մարդը հոս չէր գար՝ թէ
որ որոշ չգիտնար թէ դուն ես ան
բաներուն գողցողը : Զուրցածնե-
րուդ վկայ մը չունիս, ի՞նչպէս կըր-
նաս գրեզ արդարացընել » : — « Աս

միայն կը գրուցեմ որ ատ մարդը
զքեզ խաբեր է »:

Ետքը Եղուարդը սկսաւ պատմել թէ ինչպէս ժողովուրդը զինքը հրմըշտըկելով՝ չէր կրցած կապոցը ամուր բռնել և Թամիզին մէջ ընկեր էր: «Շատ մի ջանար, ըսաւ դատաւորը, քու յանցանքդ պարտըկելու: Այնպէս մը կը խօսիս իբր թէ աշխարհքիս մէջ էն ազնուական մարդը ըլլայիր: Յցունայիմ ո՛ւր է ազատութեանդ թուղթը »: Եղուարդը հանեց ծոցէն իր ազատութեան գիրը՝ որ Լամպէրը տուեր էր: Գատաւորը ուշադրութեամբ քննելէն ետքը, ըսաւ. « Իրաւցընէ աս զինուորական վկայութիւնը զքեզ կրնար արգարացընել, բայց որովհետև աս պարոնը վկայներ ալ ունի քեզի դէմ, հիմա անոնց վկայութիւնն ալ լսենք »:

Աս ըսելով աչք ըրաւ դատաւորը իր մարդիկներուն. անոնք ալ երկու դաժան մարդիկ ներս մտուցին՝ որ երզում պատառ ըլլալով

կը վկայէին՝ թէ մենք տեսանք որ
Եգուարդը Թամիզին կամրջէն ան-
ցաւ, թէին տակն ալ կապոց մը
կար, և առանձին փողոց մը քա-
շուելով՝ քիչ մը ատեն հոն ուշա-
ցաւ, ու ետքը նորէն դառնալով
ան կապոցը գետը նետեց, բայց
յայտնի կերևնար որ մէջինները
պակսեր էին. ինքն ալ շուտ մը ե-
լաւ գնաց:

Ան ատեն վաճառականն ալ տ-
նոր երեսն 'ի վեր պոռալով սկսաւ
ըսել. « Կը լսես, աս վկայներովս
քու սուտ ու խաբերայ հնարքնե-
րուդ խայտառակութիւնը յայտնի
եղաւ »:

« Ես աս վկայները չեմ ճանչնար,
ըսաւ Եգուարդը. և քու տեղդ ես
կամչնամ որ այսպիսի մարդիկներ
դատաւորին դիմացը հաներ ես:
Կուզես յայտնի ցուցընեմ որ ա-
մէն զուրցածնին ալ սուտ է. ես
կամրջէն անցնելէն ետքը առանձին
փողոց մը մտած չեմ, մանաւանդ
թէ դեռ կամրջին սկիզբն էի՝ եր-

բոր ժողովուրդը զիս հրելով՝ կա-
սոցը ձեռքէս ելաւ ու գետին մէջ
ընկաւ: Ես օտարական ըլլալով՝
կամրջին վրայ գտնուող մարդիկը
չէի կրնար ճանչնալ. ապա թէ ոչ
ես ալ զանոնք վկայ կը կանչէի քու
բերանդ գոցելու համար. բայց ես
վկայ մը ունիմ նէ Աստուած է,
մարդկանց առջև զինքը ինծի վկայ
կը կանչեմ. ինքը զիտէ որ ես ան-
մեղ եմ, և ճշմարտութիւնը շուտ
կամ ուշ միշտ կը յաղթէ. զիտցած
ըլլաս որ անմեղութիւնը ծածուկ
չմնար, երբ որ ըլլայ կը յայտնուի »:

Աս խօսքերը որ Եզուարդ անմե-
ղութեամբ ու համարձակութեամբ
կը զրուցէր մեծ տալաւորութիւն ը-
րին ամէն հոն տեղը եղողներուն
վրայ. դատաւորն ալ խոռ աչքով
մը վաճառականին ու երկու վկայ-
ներուն վրայ կը նայէր. ամէնքն ալ
լուռ կեցած կը մտածէին:

Աս լռութեան ատենը մէյմըն ալ
գուռը բացուեցաւ, Ռիքթոն զօրա-
պետն ու Լամպէր վաճառականը

մէկտեղ ներս մտան: Եղուարդը
մէկէն անոնց դիմացը ելաւ, ու
ղուարթ դէմքով բարևեց դանսնք.
Ռիքթոն առաջ անցաւ ու ըսաւ.
«Պարոն դատաւոր, մենք երկուք
նիս ալ եկեր ենք աս տղուն վկայ
ելու՝ որ փուճ տեղը ձեր ձեռքը
մատնուեր է: Թէ որ դուն գիտնայ
իր թէ Եղուարդը ուրիշ անգամ
իմ բանակիս մէջ ինչ քաջութիւն
ներ ըրած է Սպանիայի պատերազ
մին մէջ, և թէ ինչպէս իր բարի
վարմունքովը երևելի եղեր է, ան
ատեն շատ դիւրաւ կրնայի զինքը
արդարացընել: Ուրեմն ինչ է
տեսնենք իրեն յանցանքը: Աս վը
կայ ըսածներդ ալ այնպիսի մար
դիկ կերևան՝ որ իրենց խօսքին
ճշմարտութիւնն ալ կարծեմ չեն
կրնար հաստատել, այսպիսի խա
բեբաներուն խօսքին հաւտալով՝
անմեղ տղայ մը դատապարտել
կըլլայ մի: Ար խնդրենք որ աս բանս
ամենայն ուշադրութեամբ քննուի,
որպէս զի առանց աղէկ մտածելու

վճիռը չտրուի. մանաւանդ թէ տը-
ղուն առջի վարքն ալ պէտք է քրն-
նել. վասն զի առաքինի ու քաջ
զինուոր մը՝ մէկէն այսպիսի անօ-
րէն մարդ մը չկրնար դառնալ: Իմ
իրեն համար տուած վկայական
թղթերս ասոնք են. ասոնք ալ նոր
ղօրապետը ինծի զրկեր էր՝ որուն
ձեռքին տակը աս տղան երկայն
ատեն զինուորութիւն ըրեր է. զօ-
րապետին կեանքն ալ թշնամինե-
րուն ձեռքէն ինքը ազատեր է. ա-
սոնցմով կերէնայ իրեն գովելի ու
առաքինի վարքը »:

Իրաւցընէ, ըսաւ Նամպէրը, ամ-
բաստանող վաճառականին, քու
ազահութիւնդ զքեզ դրդեր է որ
դատաւորի դիմես. խօսք չտուի մի
քեզի կորսուած կապոցին գինը
հատուցանելու: Քայց դուն անկէ
աւելին կը պահանջես, և չէ թէ
միայն ամբողջ վնասը տուծել տալ
կուզես, հապա կը նայիս որ աս ան-
մեղ տղան ալ փորձանքի մը բե-
րես »:

Վաճառականը կմկրմալով « Թող դատաստանը անոր կողմը կը տրուի՝ սով որ իրաւունք ունի, ըսաւ. թէ որ աս տղուն անմեղութիւնը յայտնուի՝ ես պատրաստ եմ ան կապոցին իրաւունքէն հրաժարելու, դինքն ալ տուժելէն կաղատեմ. բայց թէ որ յանցաւոր է՝ կուզեմ որ օրինաց ապսպրրածին պէս ամենայն խստութեամբ պատժուի. դուն ալ Վամպէր, կապոցին դինքն զատ՝ բոլոր դատաստանին ծախքն ալ պիտի վճարես » : — « Շահասէր մարդ, ըսաւ Վամպէր, քանի՞ մէկ համբերենք քու ազահութեանդ » : — « Թող սրբիկայ մարդ, բան չունիս մի, ըսաւ Ռիքթոն. անշուշտ Աստուած խեղճ Եդուարդին անմեղութիւնը կը յայտնէ, և աս մարդուն չարութիւնն ալ կոչնչացրնէ. հիմա տեսնենք դատաւորը ինչ կը զրուցէ » :

Ամէնքը լռեցին. դատաւորն ալ սկսաւ այսպէս վճիռ տալ. « Որովհետեւ, ըսաւ, ամբաստանուածը

վկայ չունի՝ որ իր անմեղութեանը
վկայէ, ու ցուցընեն թէ ինքը վա-
ճառակահանին կապոցը չուղելով գե-
տը ձգեր է, ասոր համար իրեն ի-
րեք օր տտեն կուտամ, որպէս զի
կամ ան կապոցը տիրոջը դարձը-
նէ, կամ օրէնքին հրամայածին պէս
պատժուի » . աս ըսելով հրամայ իր
մարդիկներուն որ Նդուարդը բան-
տը տանին, բայց « Նրենէ մի թո-
ղուք, ըսաւ, որովհետեւ որ յանցա-
ւոր ըլլալը դեռ յայտնի չէ » :

Լամպէրն ու Ռիքթոնն ալ ելան
գնացին, և ամէն ջանք կընէին որ
կապոցը գտնեն. գացին Նդուար-
դին ցցուցած կամրջին վրայ՝ և ի-
րենց աչքին առջևը փնտռել տուին,
ու մեծ վարձք խոստացան նաւա-
վարներուն՝ ո՛վ որ աս բանս գտնէ:
Սմբաստանող վաճառականն ալ
կուղէր միտքը դրածը առաջ տա-
նիլ . մանաւանդ երբոր կը մտածէր
թէ իրեն ինչ մեծ ամօթ պիտի ըլ-
լայ՝ թէ որ անոնք կարենային կա-
պոցը գտնել: Աս բանիս համար ան

իրեք օրը ամենեւին հանգստութիւն
չունեցաւ. տասը անգամ մը տնէն
դէպ ՚ի թամիզ գետը եկաւ գնաց.
սիրտ կուտար նաւավարներուն և
անոնց գլխաւորն ալ ծածուկ կը
յորդորէր՝ որ եթէ յանկարծ գըտ-
նեն ան կապոցը՝ գաղտուկ իրեն
բերէ:

Իսկ Եդուարդը բանտին մէջ
զՍտուած վկայ կը կանչէր, որ ի-
րեն օգնութիւն հասնի: Անդադար
իր մօրն ու եղբօրը վրայ կը մտա-
ծէր, և կարծէր թէ մէյմըն ալ դա-
նոնք աս աշխարհքիս մէջ պիտի
չտեսնէ: Աչուրները երկաթէ սլա-
տուհաններուն վրայ տնկած՝ ուս-
կից հազիւ կերենար կապուտ եր-
կինքը, « Ով մարիկ, կըսէր, ինչ
ձուն պիտի դայ գլխուդ՝ երբոր լը-
սես թէ Եդուարդը մութ բանտի մը
մէջ յանցաւոր ու աւազակ մար-
դու մը պէս փակուեր է: Բայց դուն
իմ անմեղութիւնս զիտես. և աս
բանս զիս ալ կը մխիթարէ զքեզ
ալ. դուն զիտես որ տղադ այնպի-

սի մարդ չէ որ իր ընկերոջը ունեցածը յափշտակէ. աւելի կուզեմ մեռնիլ քան թէ այսպիսի յանցանք մը ընել: Ով Աստուած իմ, ողորմէ՛ իմ խեղճ մօրս, և թող մի տար որ լսէ իմ խեղճութիւնս »:

Երբոր ասանկ իրեն ցաւերուն վրայ կը գանգատէր, բանտին դուռը բացուեցաւ ու բանտապետին մանչը ներս մտնելով՝ իրեն կերակուրը բերաւ: « Ա՛ռ քու ուտելիքդ, ըսաւ. ինչո՞ւ համար կուլաս. պատերազմի մէջ մտնող երիտասարդը այսպէս կը յուսահատի մի, ամօթ չէ քեզի պզտի տղու մը պէս լալը: Քանի մը տարի բանտը կենալով պիտի մեռնի՛ս. նայէ ես տասուերկու տարի է որ հոս եմ և միշտ ալ պիտի մնամ: Եւ եւ, քիչ մը բան կեր, բանտ ըսածդ ապահով տեղ մըն է, ոչ թշնամիին թնդանօթէն վախ ունիս, ոչ ալ հրացանի գնտակներէն: Երանի թէ ամենուն բանտն ալ այսպէս ըլլար »:

Նշուարդը աշուրները արցունքով լեցուած նայեցաւ մէյմը աս դժբաղդ մարդուն վրայ և շնորհակալ եղաւ իրեն տուած մխիթարանքին ու բերած կերակուրին համար. բայց բերանը բան մը չգրաւ։

« Գոհ չես այսչափին, ըսաւ ան մարդը. մէկալ բանտը եղողները քեզի չափ ալ հանգիստ չեն ապրիր. նայէ դուն ճերմակ հաց ու միս ալ ունիս, և կըսեն թէ քու բանդ իրեք օրէն կը լմըննայ։ Աբր, մի լար, մի վախեր դքեղ չեն սպաններ. ան պատիժը չարագործ մարդկանց համար պահուած է » : —

« Դատապարտուելուս համար չեմ լար, ըսաւ Նշուարդը. վասն զի թէ որ մեռնելու արժանի եմ նէ՛ քաջութեամբ յանձն կառնում, որովհետեւ շատ անգամ տեսեր եմ ինձի պէս կտրիճներուն մեռնիլը. բայց երբոր կը յիշեմ թէ իմ սիրելի մայրս լսելով իմին դատապարտութիւնս ցաւով գերեզման պիտի իջնէ՛ սիրտս կը կըտրտի. աս մտմտութեամբս

զիս կը տանջէ ու ցաւերս կաւել-
ցընէ »: — « Բայց ճար չկայ, պէտք
է որ քու դատաստանիդ լմըննա-
լուն սպասես, ասանկ ատենէ դուրս
յուսահատելու ինչ բան կայ, մնաս
բարով, անուշներ ըլլայ կերածդ »:

Ան ատենը Եդուարդը մինակ մը-
նալով՝ ուզեց քիչ մը բան ուտել,
բայց չկրցաւ: Երկայն ատեն ելաւ
քալեց, վերջը խոնաւ յարդին վրայ
նստաւ ու հոն տեղը քունը տարաւ,
և անանկով քիչ մը հանգչեցաւ:
Այսպէս իրեք օր սաստիկ նեղու-
թեամբ նոյն բանտին մէջը ան-
ցուց:

Չորրորդ օրն որ դատաստանի
պիտի ելլէր, կանուխկեկ ելաւ ու
աչքը դուռն էր, ու կը սպասէր թէ
կրք պիտի գան որ զինքը դատաւո-
րին առջև տանին: Ա երջապէս մար-
դիկը եկան առին տարին զինքը:

Դատաւորը աթոռին վրայ նստեր
էր, Ռիքթոնն ու Լամպէրն ալ լուռ
կեցած կը սպասէին: Եդուարդը
երկու զինուորի մէջ կեցուցին.

խեղճին երեսին գոյնը պատ կտրեր էր, և այնչափ տկարացեր ու վատուժցեր էր՝ որ տեսնողները կարծէին թէ շատ տարիներ բանտը կեցեր է:

«Կորսուած կապոցը գտնուեցաւ, ըսաւ դատաւորը»: — «Չէ, ըսաւ վաճառականը ուրախութեամբ»: — «Ըրած յանցանքդ պիտի խոստովանիս թէ չէ, ըսաւ դատաւորը Եղուարդին»: — «Ես չըրած յանցանքս վրաս չեմ կրնար առնել. աս բանիս մէջ յանցանք չունիմ»: — «Նորէն կը հարցընեմ քեզի, վաճառականին կապոցը գողնալդ խոստովանիս պիտի թէ չէ»: — «Ես կապոց մապոց չեմ գիտեր. թէպէտ և դիս դատապարտես, ես ասկէ զատ ուրիշ ըսելիք չունիմ»: Գատաւորը դիմացի խոշոր օրինաց գիրքը թղթատելէն ետքը թղթի մը վրայ անոր վճիռը գրեց, ու ետքը բարձր ձայնով կարդաց. «Եղուարդ Գաստոնեան Սպանիայի բանակին իրլանտացի զինուորնե-

րէն մէկը՝ իրեն յանձնուած կապո-
ցին մէջի սուղ բաները գողնալուն
համար, վեց տարի բանտը կենա-
լու կը դատապարտենք »:

Խեղճ Եդուարդը շուտով մը ա-
ռին բանտը տարին, անանկ որ ի-
րեն պաշտպաններուն ալ հաղիւ
թէ ետքի բարեւը կրցաւ տալ: Ախր-
թոնն ու Լամպէրն ալ ծուռ աչ-
քով մը վաճառականին վրայ նայե-
ցան՝ որ ձեռուրները իրարու շիշը-
փելով կուրախանար, ու ծանր կեր-
պով մը իրեն ըսին. « Գոհ եղա՞ր
հիմա խեղճ երիտասարդին արիւնը
մտնելովդ. գիտցած ըլլաս որ ա-
րած անիրաւութեանդ պատաս-
խանը Սատուժոյ դիմացը պիտոր
տաս ու պատիժդ հոն պիտի քա-
չես »:

ԳԼՈՒԽ ԺԵ

Այսմեղութիւնը ծածուկ չմնար, երբ որ
ըլայ կը յայանուի:

Երբոր Լամպէրն ու Ռիքթոնը
զարմացած իրարու հետ կը խօսէին
ան անիրաւ դատաստանին վրայ,
մէյմըն ալ դատաւորին մարդիկնե-
րէն մէկը ներս մտաւ ու դատաւո-
րին ըսաւ թէ շատ մը նաւավարներ
եկեր են ու կուզեն շուտով իրեն
հետ տեսնուիլ: «Ներս կանչեցէք,
ըսաւ դատաւորը» ու նորէն իր
տեղը նստաւ: Նաւավարները խառ-
նաբնդոր ամէնքը մէկէն ներս մը-
տան, ամէնքը սկսան ասոնց վրայ
նայիլ: Մէջերնէն մէկը խխուժ
դարձած կապոց մը թւին տակը
զարկած կը բերէր: «Տէր Աստուած,
կանչեց Լամպէրը, աս է ան անի-

Ճած կապոցը. պարոն դատաւոր,
Եդուարդը ետ կանչել տուր »: Ան
ատենը դատաւորը մարդ զրկեց որ
չուտով Եդուարդը բանտէն հանեն
հոն բերեն. նաւաւարներուն ալ
հրաման տուաւ որ աս բանիս վրա,
յօք ինչ որ գիտեն դրուցեն:

Կապոցը բերողը առաջ անցաւ
ու զանիկայ դատաւորին առջևը
դնելով ըսաւ ». Պարոն դատաւոր,
իրեք օր է որ քաղքիս մէջ շնկոց
մը կար ու կըսէին թէ Թամիզ գե-
տը կապոց մը ընկեր է, մէջն ալ
չատ սուղ բաներ կան եղեր. շատ
մարդիկ ալ կը հաստատէին թէ
մենք ան կապոցը աչքով տեսանք:
Երէկ չէ առջի օրը աս երկու պա-
րոնները (ցցուց Լամպէրն ու Ռիք-
թոնը) եկան մեզի աղաչեցին որ
գետին մէջը փնտռենք աս կապոցը
ու դտնենք. ապըսպրեցին ալ որ
գտնելնուս պէս հրամանքիդ բե-
րենք. առատ վարձք ալ խոստանա-
լով՝ ըսին թէ աս բանս որ ընէք
խեղճ տղայ մը կազատէք՝ որ աս

բանիս համար վեց տարի բանտ
դատապարտուեր է: Աս վաճառա-
կանն ալ (ցցուց ծեր վաճառակա-
նը) անոնցմէ ետքը եկաւ մեր քո-
վը՝ ու ալ աւելի վարձք խոստա-
ցաւ, ըսելով թէ որ կապոցը գտնէք,
ինձմէ զատ ուրիշի չտանիք, և ա-
սանկ ապսպրելով ելաւ գնաց: Ան
ատենն ես և իմ ընկերներս սկսանք
մէկտեղ աշխատիլ, բայց Աստուած
գիտէ որ աս բանս վարձք առնելու
համար չէինք ըներ, հապա ան խեղճ
տղան ազատելու համար: Երե-
կուան օրս շատ աշխատեցանք,
բայց բան մը չգտանք. իսկ այս-
օր երկու ժամ առաջ աս կապոցը
կամրջին տակը գտանք, ու ես ալ
երկըթէ ճանկովս ջրէն վեր քաշեցի
զանիկայ, և առինք զգուշութեամբ
հրամանքիդ բերինք »:

« Զուրցածներդ իրաւ ըլլալուն
երգում կրնաս ընել, ըսաւ դատա-
ւորը »: — « Կերգուըննամ պարոն
չէ թէ միայն ես հապա իմ ընկեր-
ներս ալ »: — « Աս բանիս համար

ամէնքնիս ալ երգում կրնենք, ըսին նաւավարները մէկբերան կանչուրուտելով. և թէ որ ուրիշ վկայ ալ ուզէք, մեր ընկերներէն հարիւր հոգի դեռ կրնան վկայել աս բանիս. վասն զի իրենք ալ աչքով տեսան աս կապոցիս ճանկէն կախուած ջրէն դուրս ելլելը »:

«Շատ աղէկ, շատ աղէկ, ձեր վկայութիւնը ինձի բաւական է, ըսաւ դատաւորը. բայց ան զուրոյեցէք ինձի, աս կապոցը ջուրը ձգող տղան կը ճանչնա՞ք թէ չէ: — «Չէ, մենք զինքը տեսած չենք, ըսին. բայց ժողովուրդը կը պատմեն թէ ինչպէս յուսահատեր է եղեր խեղճը, երբոր տեսեր է կապոցին ջրին տակ երթալը. ինքն ալ գետը նետուեր է եղեր զանիկայ փրնտուելու համար, բայց չգտնելով տրտում տխուր լալով տուն դարձեր է »:

Դատաւորը ուրիշ հարցընելու բան չունէր, իրեն ալ կերեւնար թէ բաւական քննութիւն եղաւ, ու Ե-

գուարդին անմեղութիւնը յայտնուեցաւ. ուստի ներս կանչել տուաւ խեղճ տղան: Եգուարդը ներս մտածին պէս, մէյմը կապուցին վրայ նայեցաւ, մէյմըն ալ կապոցը բերող նաւավարին: «Տէր Աստուած աս ինչ բան է, ա՛հ սիրելի եղբայրս, ո՛վ Լեոն, ըսելով կանչեց»: — Ա՛ն ալ «Ո՛վ սիրելի Եգուարդս ըսելով՝» մէկմէկու պըլլուեցան, և բոլորովին իրենք զիրենք կորսնցուցած իրարու հետ կը պագտուէին: «Տէր Աստուած, ըսաւ Եգուարդը, երազ է տեսածս. նաւավար եղեր ես եղբայր. հապա մայրս . . . »

Աս անկարծելի դիպուածը և Լեոնը Լոնտրայի մէջ նաւավարի զգեստով տեսնելը՝ մեծ վախ ձգեցին իր սրտին մէջ. կարծէր թէ գժբաղդութիւն մը պատահեր է իրենց տանը. ուրախութիւնն ու ցաւը մէկտեղ կը խառնուէին, չէր գիտեր թէ ինչ բանի համար Լեոնը իր մայրը թողուցեր է. ուստի մըտ-

քէն կըսէր թէ անշուշտ մայրս մե-
ռեր է, Լևոնն ալ իր գլխուն ճար-
մը գտնելու համար՝ հօրս պէս նա-
ւաւարութեան ձեռք զարկեր է։
Բայց Լևոնը անոր սիրտը հան-
դարտեցուց, և համառօտմը պատ-
մեց իրեն գլխէն անցածները։

Ռիքթօնն ու Լամպէրը անոնց
քովը եկան, և իրենք ալ անոնց
երջանկութեանը վրայ կ'ուրախա-
նային։ « Քու դժբաղդութիւնդ եղ-
բորդ անմեղութիւնը յայտնի ընե-
լու համար է եղեր, ըսաւ Ռիքթօնը
Լևոնին. Աստուած քու համբերու-
թեանդ վարձքը տուաւ որ եղբայրդ
զրպարտութենէ ազատես. դուն
զինքը ազատելովդ իրեն ըրած ա-
ռաքինութեանը փոխարէն ըրիր »։

Դատաւորն ալ Եղուարդէն թո-
ղութիւն ուղեւով՝ իմացուց իրեն
թէ անմեղութիւնը այնպէս յայտնի
ցուցուեր էր որ տուած վճիռն ալ
ետ կը դարձնէ։ Ետքը դարձաւ
վաճառականին ու ըսաւ. « Քու ալ
որ ինձի այսպիսի սխալ դատաւ-

տան մը ընել տուիր, պարտական
ես նոյն տուգանքը տալու՝ ինչ որ
Լամպիրէն կը պահանջէիր. և ան
կապոցն ալ որուն համար կըսէիր
թէ Նդուարդը գողցաւ, քու ըրած
զրպարտութեանդ համար իրեն պի-
տի տաս, և դատաստանէն չելած
թողութիւն պիտի խնդրես իրմէ՝ որ
անիրաւ տեղը իրեն անունը կոտրե-
ցիր: Իսկ մէկալ երկու չարագործ
սուտ վկայները՝ որ անշուշտ աս
բանս չգիտնալով վկայելուն հա-
մար վարձք ալ առած են, ամենայն
խստութեամբ թող պատժուին »:

Վաճառականը կատաղութենէն
ինքզինքը կուտէր, ու ամօթէն դե-
տին կ'անցնէր. վերջապէս քթին
տակէն մռմռալով Նդուարդէն թո-
ղութիւն ուզեց, ու առանց կապո-
ցին վրայ նայելու կծիկը դրաւ դուրս
փախաւ: Համբուն տղաքները ա-
սոր ետեւէն ընկան ու զինքը քարի
բռնեցին, և թէ որ զինուորները
անոր տանը բոլորտիքը չառնէին ու
անոնց դէմ չդնէին՝ պատուհաննե-

րուն ապակիներն ալ բոլոր կը կոտ-
րէին :

Ռիբթօնն ու Վամպէրը Նդուար-
դին ու Վեոնին հետ մեծ յաղթու-
թիւն ըրածի պէս՝ ելան տուն դար-
ձան, ու նոյն օրը փառաւոր հար-
կիք մը ըրին: Թէպէտ և կապոցը
Նդուարդին մնաց, բայց ինքը չու-
ղեց մէջէն բան մը առնուլ. հապա
ինչ որ մէջը կար ծախեց, և անկէ
եկած ստակը իրեք մաս բաժնեց.
մէկ մասովը Վեոնը ազատեց, մէ-
կալ մասը Վեոնին հետ կապոցը
գտնող նաւավարներուն բաժնեց,
երրորդ մասն ալ աղքատներուն
տուաւ. առաքինի Նդուարդը առ
կապոցէս իրեն համար բան մըն ալ
չպահեց :

Բոլոր օրը բարեկամական խօ-
սակցութիւններով անցուցին, եր-
կուքն ալ չէին կշտանար Աստու-
ծոյ նախախնամութիւնը օրհնելէն՝
որ այնպիսի գիպուածով մը մէկ-
զմէկ գտնել տուեր էր, որուն մէջ
Աստուծոյ ողորմութիւնը յայտնի

կերևնար: Եդուարդը Վեոնին հետ
զնայ անոր կեցած տեղը, որպէս
դի անոր ունեցածը չունեցածը ժող-
վրտեն ու Վամպերին տունը բե-
րեն, որովհետև ինչուան Իրլան-
տայ երթալու ատեննին՝ հոն պիտի
կենային: Եդուարդը շատ զարմա-
ցաւ երբոր տեսաւ եղբօրը բանե-
րուն մէջ աղուոր ոսկի ժամացոյցը
ու երկու արծըթէ տուփերը: Հար-
ցուց անոր թէ «Չանոնք ո՞ւր տե-
ղէն ձեռք ձգեցիր»: Վեոնն ալ վա-
ճառականին պատմութիւնը իրեն
պատմեց, և խոստացաւ զինքն ալ
մէկտեղ տանելու ան մարդուն
տունը՝ որ աս բաներս իրեն տուեր
էր: Երկրորդ օրը ելան միատեղ
զնային:

Վաճառականը մեծ ուրախու-
թեամբ ընդունեցաւ զիրենք, և ի-
մանալով որ Եդուարդը Վեոնին
կղբայրն է՝ մեծ ուրախութիւն ցը-
ցուց իրեն այսպիսի ազնիւ կղբայր
մը ունենալուն համար: Երբոր Վեո-
նը իմացուց անոր նաւավարութե-

նէ ազատիլը, և թէ քանի մը օրէն
իր հայրենիքը պիտի դառնայ, ու
իրեն մայրը, տունն ու տեղը պիտի
տեսնէ, վաճառականը քիչ մը կե-
նալէն ետքը մօտ եղած խուցը գը-
նաց ու շուտով մը նորէն դարձաւ:
Ետքը հրամեց որ խմելիք մը հանեն
երկու եղբարց, ինքն ալ անոնց յա-
ջող ճամբայ բարեմաղթելով խմեց
անոնց կենդանութեանը. վաղուան
օրն ալ կէսօրուան կերակուրի
հրամցուց զանոնք. « Բայց հիմկու,
հիմա հետս եկէք մէկտեղ երթանք »
ըսելով՝ ելան գնացին:

Վաճառականը առաւ տարաւ զի-
րենք լաթեղէն ծախողի մը խանութ-
ը, և անոնց համար զգեստացու կը-
տաւ գնեց. մարդուն ալ ապսպրեց
որ երկուքին համար ալ մէյմէկ
գլխարկ, վզնոց ու կօշիկ գնէ, և
որչափ կարելի է նէ շուտով հաս-
ցընէ: Ասոնցմէ զատ Եսթերին,
Վարդուհիին և Եւփիմէին համար
ալ ազուոր կտաւներ գնեց. Ե-
դուարդին մատն ալ մատնի մը ան-

ցուց, խնդրելով որ յիշելիքի մը պէս միշտ զանիկայ վրան պահէ. Լեոնին ծոցն ալ կամացուկ մը քրտակ մը ոսկի դրաւ ճամբու ծախքի համար. վերջը երկուքն ալ իրենց տեղը հասցուց:

Երբոր երկրորդ օրը կէսօրուան կերակուրի գնացին՝ տեսան որ Ռիքթօնն ու Լամպէրն ալ հոն տեղն էին. վաճառականը առանց իրենց իմացընելու՝ զանոնք ալ սեղանի հրաւիրեր էր: Սեղանին վրայ Ռիքթօնն ու Լամպէրը վաճառականին երկու կողմերը նստեր էին, Լեոնն ու Եդուարդն ալ առնոց քովը:

Հարկինքը խիստ փառաւոր եղաւ. վաճառականը կերակրէն ետքը երկու եղբարց մօրը կենդանութեանը գինի որ խմեց, Եդուարդին ու Լեոնին սիրտը ելաւ ու սկսան լալ. իրենք ալ առին խմեցին իրենց բարերարներուն կենդանութեանը: Կերակուրը լմըննալէն ետե՛ խել մը ատեն ալ իրարու հետ խօսելով

անցուցին, և ուշ ատեն մէկմէկէ
բաժնուեցան, խօսք տալով որ ճամ-
բայ ելլելէն առաջ նորէն իրարու
հետ տեսնուին:

Եւոնը պատմեց եղբօրը թէ ինչ-
պէս ուղղափառ քահանայներ գը-
տեր էր. և առջի կիրակին առաւ
դինքը ան պարտէզը տարաւ՝ ուր
մատուռը շինած էր: Նոյն օրը եր-
կուքն ալ խոստովանելով ջերմե-
ռանդութեամբ հաղորդուեցան. Ե-
դուարդն ալ որ այնչափ ատենէ ՚ի
վեր դուրկ մնացեր էր աս քաղցր
մխիթարանքէն՝ մեծ երջանկութիւն
կը սեպէր իրեն հրեշտակներուն
անմահական հացին արժանի ըլլա-
լուն համար:

Վերջապէս ճամբայ ելլելու փա-
փաքելի օրը եկաւ հասաւ: Աննաւն
որ Լամպէրը Իրլանտայ պիտի գըր-
կեր պատրաստուեր էր ու յաջող
հովի կը սպասէր: Երկու եղբարքը
եւան գնացին վաճառականին տու-
նը, որպէս զի ետքի բարեւնին տան
ու շնորհակալ եղան անոր ըրած

բարիքներուն համար. վաճառակա-
նին խաթունը սղտի սնտուկ մը
բերաւ իրենց տուաւ, որուն մէջ
աղուոր զարդարանքներ կային. «Ե-
դուարդ, ատ սնտուկին մէջը մատ-
նի մըն ալ կայ, ըսաւ քաղաքավար
կերպով մը, անիկայ ալ քու ընկե-
րոջդ տաս »: Եդուարդը շատ զար-
մացաւ խաթունին ըրածին վրայ,
ու երկուքն ալ բոլոր սրտանց շնոր-
հակալ ըլլալով՝ դարձան եկան
Լամպերին ու Ռիքթոնին քովը :
Ճամէ մը ետքը միատեղ ելան ծովե-
զերքը գնացին, ուր որ նաւը իրենց
համար կը սպասէր. հոն տեղը ի-
րենց բարերարներուն վերջի բա-
րենին տուին, ու բոլորովին իրենք
զիրենք Աստուծոյ յանձնելով՝ նա-
ւը մտան ու յաջող հովով ճամբայ
եկան: Քիչ ատենէն Իրլանտայի ծո-
վեզերքը սկսաւ երևնալ. ու քիչ
ժամանակուան մէջ աղէկ ճամբով
մը հասան իրենց հայրենիքը՝ ու մէ-
կէն ցամաքը եկան:

ԳԼՈՒԽ ԺԶ

Երեկոյեան ընթերցմունք :

Ամբողջան պայծառ ու լուսընկայ գիշեր մըն էր ան գիշերը՝ երբոր Աւոնն ու Եդուարդը նաւավարի զգեստով Իրլանտայի տնակին բոլորտիքը եղած բլուրներէն վար կ'իջնէին. քանի որ առաջ կ'երթային ան տեղուանքը հանդիպած սրտաշարժ դիպուածները մտքերնին կուգար. Աւոնը Եդուարդին կը ցուցընէր ան հին կաղամախի ծառերն՝ որոնց շուքին տակը նրատելով կը հանգչէր, երբոր վախկոտ եղջերուներուն ու վայրի խողերուն ետեէն ընկնելով արիւնքրտինք կը մտնէր: Եդուարդն ալ կը ցուցընէր ան հայլիի նման լիճը՝ որ գիշերուան թեթեւ քամիէն կը

չարժէր, և անոր եզերքը իր ձեռքովը տնկած ուռենիները. երբոր աչքը կը դարձըներ ու ձորին վրայ կը նայէր, իրեն տղայութեան ժամանակը հոն տեղուանքը ըրած ուրախութիւնները միտքը կուգային, կը համրէր բուրգի ձեով կտրած պտղատու ծառերը՝ որոնց որ ճիւղերուն վրայէն աստէն մը մամուռները կը մաքրէր: Ատեն աստէն կանկ կ'առնէր ու կարծես թէ մօրը ձայնը լսելով՝ իր սիրտը ուրախութեամբ կը լեցուէր:

« Քիչ մը հոս տեղը հանգչինք, ըսաւ եղբօրը, ինչուան որ մութը աղէկ մը կոխէ, որպէս զի աւելի զարմանք բերենք մեր մօրն ու քու ընկերոջդ Վարդուհիին: Երբոր տնակին մօտենանք, առաջ դուներս մտի, ես ալ ետեւէդ կուգամ, որպէս զի մերոնց ուրախութիւնը աւելի երկայն քէ, ու մենք ալ տեսնելով զուարճանանք. բայց նայէ խօսակցութեան ձայն մը կայ, կը լսես »: — « Իրաւ կըսես, ըսաւ

Եւոնը, ես ալ մօրս ձայնը կ'առնեմ կոր» ըսելով ուսը շալկած կապոցը Եղուարդին քովը դրաւ, ու քովէքով նստան: — «Նայէ, ըսաւ Եղուարդը, Եւփիմէն բան մը կը կարգայ կոր. ինչպէս ալ աղէկ սորվեր է կարգալը. իր պզտի հասակին չես տար. շիտակը ես աս բանիս վրայ շատ դարմացայ»:

Իրաւցընէ նոյն ատեն Եսթերը դրան դիմացը նստեր էր՝ ու Եւփիմէին կարգացածը մտիկ կընէր որ Աստուածաշունչին աս կտորն էր.

«Երբոր Տուբիան Հռազուելի աղջկան հետ կարգուելուն պատճառաւ շատ ուշացաւ, իր հայրը խիստ սիրտմաշուքի մէջ էր ու կըրսէր. Արդեօք ինչ բանի համար այսչափ կուշանայ մեր զաւակը. չըլլայ թէ Գաբայէլը մեռած ըլլայ. չըլլայ թէ զաւակիս գլխուն փորձանք մը եկած ըլլայ: Աս մտմտութենքով այնպէս սաստիկ տրտմած էին տըղուն հայրն ու մայրը՝ որ երկուքն ալ գլուխ գլխի տուած, ինչո՛ւ տղա-

նիս խոստացած ատենը չդառնար
ըսելով՝ լալէն չէին դադրեր: Մա-
նաւանդ տղուն մայրը Աննան՝ աղ-
բիւրի պէս արցունք թափելով ե-
րած սրտով կը դրուցէր. Վա՛նխ, սի-
րելի զաւակս, վախ. ինչպէս դքեղ
այդչափ հեռու տեղ դրկեցինք.
դուն որ մեր աչքին լոյսն էիր, դուն
որ մեր ծերութեանը զաւազանն
էիր, դուն էիր մեր սրտին մխիթա-
րանքը, ու մեր մէկ հատիկ զաւա-
կը. ա՛խ, ինչո՞ւ դքեղ թողուցի.
դուն մեզի բոլոր աշխարհքիս ստը-
կէն աւելի կաժէիր սիրուն զա-
ւակս:

« Տօբիթը փուճ տեղը զանհկայ
մխիթարելու կը ջանար, ըսելով թէ
Աստուած կը պահէ մեր զաւակը, և
ան մարդն ալ որուն որ յանձնե-
ցինք մեր տղան՝ հաւատարիմ մարդ
կերենար: Բայց դժբաղդ մայրը
չէր ուզեր աս մխիթարութիւննե-
րուս մտիկ ընել ու կ'ըսէր. Ինչուան
որ զաւակս չտեսնեմ՝ սիրտս չհան-
դարտիր: Ամէն օր տանը դուռը

կ'ելլէր ու անցնող դարձողին իր
զաւակին վրայօք կը հարցընէր :

« Օր մըն ալ երբոր լեռան մը գը-
լուխը ելլեր նստեր էր, ու տրտում
տխուր ասդիս անդին կը նայէր թէ
արդեօք իր զաւակը կուգայ թէ չէ,
մէյմըն ալ հեռուէն երկու կտրիճ
մարդիկ տեսաւ որ վազեց գնաց
ընկերոջը աւետիս տուաւ ու ըսաւ.
Մեր զաւակը կուգայ կոր: Նոյն ա-
տեն ճամբորդներուն հետ եղած
պզտի շնիկը վազելով եկաւ ու կար-
ծես թէ անոնց հասնիլը իմացընել
կուգէր, և քծնելով ու հաջելով իր
ուրախութիւնը կը յայտնէր :

« Տորիթն ալ չկրցաւ համբերել
և սկսաւ խարխաւիելով անոնց դի-
մացը ելլել, ու աչուրները կոյր ըւ-
լալուն համար խեղճը ասդիս ան-
դին կը զարնուէր, ինչուան որ ծա-
ռաներէն մէկը եկաւ ու ձեռքէն
բռնելով իրեն որդւոյն դիմացը տա-
րաւ: Տուբիան ալ իրեն ծնողացը
ճիտը պըլլուեցաւ և ուրախու-
թեամբ պագտուեցան, և տքը շու-

տով մը Աստուծոյ շնորհակալ եղան իրեն ըրած բարիքներուն համար :

« Իսկ Տոբիթը որ իրեն որդւոյն ձեռքովը աչից լոյսը նորէն ձեռք ձգեր էր՝ անկէ ետքը շատ տարիներ ալ տպրեցաւ, և ինչուան իրեն թոռներուն զաւկրներն ալ տեսաւ. և իրեն մնացած կեանքը բարեպաշտութեամբ ու երջանկութեամբ անցընելով՝ հարիւր երկու տարուան մեռաւ » :

Եսթերին սիրտը կտոր կտոր եղաւ երբոր լսեց աս պարզ ու սրբտաշարժ պատմութիւնը : Եւփիմէն գիրքը գոցելու ատեն, Եսթերը հաւաչելով մը ըսաւ. « Ո՛ր էր թէ ես ալ նորէն տեսնէի իմ խեղճ զաւկրներս : Աչքիս լոյսը գրեթէ բոլորովին խաւարեր է արցունք թափելէն. երբ պիտի ըլլայ որ ես ալ մխիթարուիմ. երբ պիտի տեսնեմ Նդուարդս ու Ղևոնս. այսչափ ատեն է որ զրկուած եմ իրենց տեսութենէն, և դեռ ո՛ր գիտէ որչափ

ատեն ալ զուրկ պիտի մնամ: Իմ սիրելի ընկերս վերջի անգամ չկրրցայ տեսնել, որ քիչ մը մխիթարուէի. անշուշտ հիմա ալ առանց իմ զաւկըներս տեսնելու գերեզման պիտի իջնեմ: Տէր Աստուած, քու կամքդ ինչ որ է ան ըլլայ. և թէ որ քու կամքդ աս է՝ ես ալ հնազանդելու պատրաստ եմ »:

Խեղճ Եւփիմէին սիրաբ աս խօսքերէս ճզմուեցաւ ու խորունկ հառաչանքով մը գիրքը մէկդի թողուց: Ան ատեն Վարդուհին ու Մարիամն ալ արտէն դարձան ու երկու կողով պտուղ բերին: « Մարիկ ինչո՞ւ համար այնչափ տրտմեր ես, ըսաւ Վարդուհին. մեր երթալէն ետքը նոր բան մը հանդիպեցա՞ն »: — « Չէ, աղջիկս, չէ, ըսաւ Եսթերը. հապա Եւփիմէին կարդացածը սրտիս խոցերը նորսգեցին, և Լեոնիս ու Եղուարդիս վըրայ կուլամ »: — « Ինչո՞ւ միշտ այսպէս կը տրտմիս մարիկ. ո՞ր դիտէ թէ Աստուծոյ ողորմութեան ժամը

չէ հասած՝ որ զաւելըներդ նորէն
քեզի դարձընէ: Պէտք է որ իրեն
կամացը հնազանդինք, գիտնալով
որ ինքը իր զաւելըները ձեռքէ չլծու-
ղուր. և երբոր իրեն աղէկ երևնայ՝
մեր դժբաղդութիւնն ալ կը վերցը-
նէ: Հիմա քիչ մըն ալ հոս տեղս
կեցիր, օդը շատ աղուոր է, քիչ
մըն ալ հովահրէ՝ ինչուան որ մենք
երթանք կերակուրը պատրաս-
տենք»: — « Շնորհակալ եմ քու
աղուոր մխիթարանքիդ, սիրելի
Վարդուհի, ալ ասկէ ետքը ամե-
նեին պիտի չլամ, ըսաւ Եսթերը:
Դուն ալ աղջիկս, ըսաւ Եւփիմէին,
գնա անկողնիս վերեւէն Եդուար-
դին քնարը բեր ու սա ծառին վը-
րայ կախէ, որպէս զի թեւերուն
թրթռալովը քիչ մը սիրտս բացուի,
ու զաւելիս ձայնը առած սեպուիմ »:

Եւփիմէն վազեց ու քնարը բե-
րաւ. Որսոլան ալ զանիկայ ծառին
վրայ կախելով՝ Մարիամին հետ ե-
լաւ ներս գնաց՝ որ կերակուրը
պատրաստեն:

ԳԼՈՒԽ ԺԷ

Անահնկալ ուրախութիւն:

Սանկով նանկով վերջապէս գիշերուան մութը կոխեց: Աարդուհին կերակուրը պատրաստելուն պէս՝ եկաւ մօրը ձեռքէն բռնեց, որպէս զի սեղանին քովը իր տեղը տանի նստեցընէ զանիկայ, մէյմըն ալ յանկարծ ետեը դարձաւ դէպ ՚ի արտին նեղ ճամբան՝ որուն երկու կողմը փշերով ցանկ շինած էր, ու ըսաւ. « Աարծեմ մարդ մը կուգայ կոր դէպ ՚ի հոս. անշուշտ խեղճ աղքատին մէկն է որ քիչ մը կերակուր ուզելու կուգայ. աղէկ որ իրեն տալու չափ բան ունինք »: Եւ փիմէն ալ դարձաւ նայեցաւ. « Իրաւ մարդ մը կուգայ կոր, ըսաւ, բայց մեր երկրին մարդիկներուն

պէս հազուած չէ, նաւավարի ըզ-
ղեստ հազեր է » :

Եսթերը ներս մտաւ ու զնաց իր
տեղը նստաւ. Վարդուհին ալ ա-
նոր քովը նստաւ շնստաւ, մէյմըն
ալ ճամբորդը ներս մտաւ, « Բարի
քրիստոնեաներ, ես խեղճ նաւա-
վար մըն եմ, ինձի մէկ զիշերուան
համար պառկելու տեղ մը կրնաք
տալ » ըսաւ :

« Տէր Աստուած, կանչեց Եսթե-
րը, առ ձայնը Լեոնին ձայնն է » :

« Ո՛վ իմ սիրելի ընկերս . . . Ո՛վ սի-
րելի հայրս » կանչեցին մէկ բերան
Վարդուհին ու Եւփիմէն, ու եր-
կուքը մէկէն Լեոնին վիզը պըլլուե-
ցան :

« Ինչուան հիմա ո՛ւր էիր սիրելի
զաւակս » ըսաւ Եսթերը, ու ալ
չկրնալով համբերել՝ ցատկեց նըս-
տած տեղէն ոտք ելաւ : Վարդու-
հի, Եւփիմէ ձեռքէս բռնեցէք զաւ-
կիս քովը տարէք զիս, որ ես ալ
տղուս հետ պագտուիմ : Ո՛ւր ես
սիրելի զաւակս », ըսաւ ու դէպ ՚ի
անոր քովը սկսաւ երթալ :

Լեոնը դէպ 'ի մօրը վաղեց,
« Քու քովդ եմ, մարիկ, ըսաւ, և
քեզմէ չեմ զատուիր ինչուան որ ին-
ծի թողութիւն ու օրհնութիւնդ
չտաս »:

« Եւ եւ, տղաս, ըսաւ Եսթերը,
ես շատոնց քեզի ներեր եմ. իմ
օրհնութիւնս ալ միշտ քու վրայ
ըլլայ »: Լեոնը պըլլուեցաւ մօրը
ծիտը, ու երկուքն ալ կուլային:

Մարիամը աս ուրախութեան ու
հառաչանքի ձայները լսելով ներս
վաղեց: Եկու եկու ըսաւ անոր
Վարդուհին, ետքը դարձաւ Լեո-
նին ըսաւ. « Ասոր աշխատանքովն
է որ մենք ինչուան հիմա ողջ մնա-
ցինք, թէ որ ինքը չըլլար՝ սովէն
պիտի մեռնէինք »: Լեոնն ալ բո-
լոր սրտով շնորհակալ եղաւ անոր
ըրած բարերարութեանը »

« Աս ինչ մեծ բաղդ է, ըսաւ Ես-
թերը, որ Լեոնս նորէն գտայ՝ որ
ես մեռած կը կարծէի. բայց իմ ու-
րախութիւնս ան ատեն կատարեալ
կ'ըլլայ, թէ որ Եդուարդս ալ գըտ-

նէի . Նդուարդ զաւակս , արդեօր
օր մը զքեզ ալ պիտի տեսնեմ աս
խեղճ տնակիս մէջ » :

Հազիւ թէ Նսթերը աս խօսքս ը-
սաւ , մէյմըն ալ քնարին ճայնին
հետ Նդուարդին աղուոր ճայնն ալ
լսեց , որ իր մօրը սիրած խաղերէն
մէկը կ'երգէր :

« Ո՛վ Աստուած , կանչեց Նսթե-
րը , արդեօք ականջիս ճայն կուգայ ,
թէ իրաւցընէ Նդուարդիս ճայնն
է » :

Նդուարդը եղբօրը ետեւէն դա-
լու ատեն ծառին ճիւղէն կախուած
քնարը տեսնելով՝ սկսեր էր զար-
նել ու երգել , և այնպէսով իմա-
ցուց իրեն դալը . ետքը ներս մտնե-
լով Նսթերին ճիտը ընկաւ . « Ես
ալ հոս եմ սիրելի մայրս » ըսաւ և
երկուքն ալ սկսան լալ . ու երկայն
ատեն մէկմէկէ չբաժնուեցան : Ան
ատեն Վարդուհին ու Եւփիմէն ալ
եկան իրեն վիզը պըլլուեցան և ու-
րախութիւննին կը յայտնէին :

Ալ ո՛վ կրնայ սրտովել իրենց ու-

րախուժիւնը՝ որ երկայն ատեն իրարմէ բաժնուելէն ետքը ասանկ անակնկալ կերպով մէկզմէկ գըտան :

Մէկ ժամէն աւելի այսպէս ուրախանալէն ետե՛ որ կերակուրն ալ մոռցեր էին, վերջապէս սեղանի նստան: Վարդուհին ամէն ջանք ըրաւ որ նոյն ատենը ինչ որ կրնար պատրաստէ, որպէս զի երկու եղբարց հասնելուն համար ուրախութիւն մը ըլլայ. Վեոնին ալ աղաչեցին որ իրենցմէ բաժնուելէն ետքը գլխուն ինչ որ եկեր էր պատմէ. ան ալ առանց ծածկելու ամէն բան տեղն ՚ի տեղը պատմեց, և երբոր հասաւ ան տեղը թէ ինչպէս հաւատարմութեամբ նսուուն մէջ մոռցուած պահարանը վաճառականին դարձուցեր էր, յանկարծ ոտք ելաւ ու ըսաւ. « Ամէնէն հարկաւոր բանը մոռցանք ». աս ըսելով քակեց Վոնտրայէն բերած կապոցը, և մօրը, Վարդուհին ու Եւփիմէին համար բերած կտաւները ու մէկալ

ընծայները ամէնուն բաժնեց: Եսթերն ալ ձեռքն առնելով « Տեսէք զաւերներս սա բաներս կառնեմ, բայց ինչ բանի համար որ ուզե՛նամ նէ՛ ան բանին պիտի գործածեմ » ըսաւ:

Լեոնն ալ ոսկի ժամացոյցը, արծրթէ տուփերն ու վաճառականին տուած զարդերը սեղանին վրայ դնելով՝ սկսաւ նորէն իր պատմութիւնը առաջ տանիլ:

Իսկ մայրերնին Եդուարդին պատմութիւնը երբոր կը լսէր, վախէն և ուրախութենէն սիրտը կը նետէր, մանաւանդ երբոր սկսաւ պատերազմի մէջ քաշած նեղութիւնները պատմել, և թէ ինչպէս ռաստիկ խոցուելով՝ փառաւոր տղատութեան գիր ու ինչուան մահը եկամուտ մը առեր էր:

Եսթեր սա բաներս լսելով՝ ինքզինքը նորէն աշխարհք եկած կը կարծէր, որդիքն ալ ողջ առողջ տեսնելով՝ սիրտը բոլորովին հանգչեցաւ: Կարծես թէ իր որդւոցը

բնութիւնն ալ այնչափ ատեն օտար-
ներու հետ բնակելով, զլիսնուն ե-
կած դժբաղդութիւններով և իրենց
մօրմէն երկայն ատեն բաժնուած
կենալովը բոլորովին փոխուեր էր,
ու երկուքին վրայ ալ քաղցր ու խո-
հեմ կերպ մը կերենար:

Մայրերնին ան օրուան պէս ա-
խորժակով կերակուր չէր կերած,
և սեղանէն ելլելու ատեն ըսաւ.
« Հիմա ալ գոհ սրտով կը մեռնիմ
որովհետև Սատուած երկու զա-
ւակներս նորէն տեսնելու արժանի
ըրաւ զիս: Ամենևին չէի կարծեր
որ իմ տրամութիւնս այսպէս ու-
րախութիւն պիտի դառնայ. փա՛ռք
Սատուծոյ որ աշխարհքիս բաները
սքանչելի կերպով կը կարգաւորէ:
Ան դժբաղդութիւններն որ կրե-
ցինք իրեն ողորմութիւնը յայտնի
ընելու համար են եղեր. իմ զաւկը-
ներուս կորսուիլն ալ որ ես մեռած
կարծելով կուլայի, զիրենք աւելի
աղէկ վիճակի մէջ տեսնելու հա-
մար է եղեր: Աամաց կամաց դուք

ալ կ'իմանաք սիրելի տղաքս՝ թէ
ձեր բաժնուելէն ետքը մենք ալ հոս
տեղս ինչ բաներ քաշեցինք, և թէ
ինչպէս Աստուած մեզի օգնութիւն
հասաւ աս առաքինի ու աշխատա-
սէր աղջկան ձեռքովը, որուն ծա-
ռայութեանը մէկ կերպով մըն ալ
չենք կրնար փոխարէն ընել: Ու-
րեմն քեզ տեսնեմ տղաս, ըսաւ
Եդուարդին, առ քու քնարդ ու
չնորհակալութեան աղուոր երգ մը
երգէ. գոնէ աս գիշերս ալ այսպէ-
սով անցընենք »:

Եդուարդն ալ քնարը առաւ՝ թե-
լերը յարմարցուց և սրտաշարժ
ձայնով մը երգեց աս օրհնու-
թիւնս.

Օրհնեցէք զԱստուած ամենայն
ազինք,

Օրհնեցէք ըզնա ուղիղք և բա-
րիք,

Ձի զոզորմութիւն իւր ծագեաց 'ի
մեզ,

Եւ զիւր զյուսացեալս չառնէ նա
անտես.

Եւ զաջոյն հըղօր ձիրըս պար-
զեաց

Ընկալցուք այժմէն և յեւս մեր
յաստեաց:



ԳԼՈՒԽ ԺԸ

Պատկ:

Երկու եղբարց դալովը Աստուծոյ օրհնութիւնն ալ Իրլանտայի տնակին վրայ իջաւ: Շուտով մը ամէն բան կարգի կանոնի դրին. արտերը մշակեցին, ծառերը յօտեցին. վայրի կենդանիներն ալ ցիրուցան եղան, լիճն ալ սկսաւ ձկներով լեցուիլ: Եդուարդը առջինին պէս ձկնորսութեան ու ծառերը և ոչխարները դարմանելու ձեռք զարկաւ, և երկու եղբարց ջանքովն ու աշխատութեամբը երկիրները այնպէս մշակուեցան՝ որ մէկէն սկսան ծլիլ ու ծաղկիլ: Վարդուհին ալ անկէ ետքը տնական բաներէն զատ՝ ուրիշ բանի չէր խառնուեր. Եւփիմէն ալ կը նայէր որ ամէն բանի մէջ մօրը օգնէ:

Մարիամը տեսնելով որ ամէն
բան տեղը եկաւ՝ շատ կ'ուրախա-
նար. որ մը Եսթերին իմացուց թէ
ինքը միտքը դրեր է որ ալ ելլէ Եր-
թայ, որովհետեւ ալ իրեն կարօտ
չէին :

« Ի՞նչ կ'ըսես, ըսաւ Եսթերը .
ինչ, միթէ մենք զբեղ թող տալու
համար քովերնիս առինք . չըլլայ
թէ մէյմըն ալ ատ բանդ գրուցես :
Յուսամ որ մէկ օր մը միտքս դը-
րածս կը կատարուի, դուն ալ ան
ատեն ինձի աւելի սիրելի պիտի ըլ-
լաս : Մէյմըն ալ երթալու խօսք
պիտի չհանես բերնէդ . քիչ մըն ալ
սպասէ, մենք ամէն բան կ'որո-
շենք » :

Քանի մը օրէն ետքը Եսթերը
Եդուարդը կանչեց՝ ու ըսաւ. « Սի-
րելի զաւակս, քու դառնալ զալդ
ինձի մեծ ուրախութիւն եղաւ, և
ամէն օր զԱստուած կ'օրհնեմ որ
իմ աղօթքս լսեց : Գու կը տեսնես
որ ես օրէ օր ուժէ կ'իյնամ, և քիչ
ատենէն թերևս մէջերնիդ ալ չգըտ-

նուիմ. բայց մեռնելէս առաջ քու
երջանկութիւնդ տեսնել կուզեմ,
բարեպաշտ ու խելացի աղջկան մը
հետ պսակուելով: Անշուշտ դուն
իմ միտքս հասկըցար. Մարիամին
վրայ է խօսքս: Աստուած թէ որ աս
աղջիկը մեզի դրկած չըլլար՝ սովէ
կը մեռնէինք, վասն զի ձեր երթա-
լէն ետքը մենք մեզի մնացինք:
Թէպէտ և բոլոր ունեցածնիս չու-
նեցածնիս աս աղջկան տանք, ի-
րեն ըրած ծառայութիւններուն հա-
տուցմունք չենք կրնար ընել. վասն
զի կրնամ ըսել թէ մէկ զաւակ մը
իրեն ծնողացը համար այնչափ չաշ-
խատիր, որչափ որ անիկայ մեզի
համար աշխատեցաւ: Արոշ գի-
տեմ որ դուն ալ Մարիամէն ա-
ղէկ ընկեր մը չես կրնար գըտ-
նել: Աս բանիս վրայ մտածէ, ու
Աստուծմէ ալ շնորհք խնդրէ՝ որ-
պէս զի քու ընելիքդ գիտնաս: Ես
չեմ ուզեր զքեզ ստիպել որ կար-
գուիս, բայց թէ որ աս իմ փա-
փաքս կատարուի, դուն զմեզ բո-
լորովին երջանիկ պիտի ընես:

« Ես ալ քու մտքիդ վրայ եմ, ըսաւ Եդուարդը. հասած օրէս 'ի վեր ճանչցայ Մարիամին ազնիւ բնաւորութիւնը, և ձեզի ըրած ճառայութեանը վրայ զարմացայ, ես ալ կարծեմ թէ իրմէ աւելի աղէկ ընկեր մը պիտի չկարենամ գտնել. աս կը մնայ դիտնալու՝ թէ արդեօք ինքն ալ կը հաւանի՞ աս բանիս » —
« Ես իրեն հետ կը խօսիմ, ըսաւ Եսթերը »:

Սմէյ մը ետքը Եդուարդն ու Մարիամը գեղի ժամը երթալով խոստովանեցան ու հաղորդուեցան: Պսակէն ետքը աւագերէցը՝ որ պատուական ձեր մըն էր սիրաշարժող քարոզ մը տուաւ երկուքին ունեցած պարտքերուն վրայօք. և ետքը խօսքը Աստուծոյ նախախնամութեանը վրայ դարձընելով՝ Եդուարդին գլխէն անցածներն ալ մէջ բերելով ըսաւ. « Աստուծոյ ձեզի ըրած բարիքները անշուշտ երախտագէտ ըլլալու պիտի յորդորեն զձեզ. անցած դիպուածները

ձեզի խրատ պիտի ըլլան՝ որ դալիքներուն ալ Աստուծոյ սիրոյն համար համբերէք, և անով արքայութեան մէջ ձեզի համար անհատնում դանձ մը դիզէք: Ձեր երջանկութիւնը Աստուծոյ օրէնքները պահելէն կը կախուի, և ան ատեն կ'ըլլաք հնազանդ որդիք Աստուծոյ, առաքինի ծնողք, և բարի ու ճշմարիտ քրիստոնեաներ »:

Եկեղեցական հանդէսը լմրննալէն ետքը երբոր տուն դարձան՝ Եդուարդը իրեն ընկերոջը հետ մէկտեղ գնաց մօրը դիմացը չորեցաւ ու իրեն օրհնութիւնը խնդրեց: Եսթերն ալ գողդղալով ձեռուները երկինք վերցուց՝ և Աստուծոյ աղաչեց որ իր շնորհքը միշտ անոնց վրայէն պակաս չընէ. ետքը օրհնեց իրեն զաւկրները և անոնց հետ պագտուեցաւ:

Երբոր կերակուրի պիտի նըստէին, մէյմըն ալ Եւփիմէն՝ որ աղբիւրէն ջուր բերելու գացեր էր, վազելով ու հեալով եկաւ հօրը

պատմեց թէ աղուոր կառք մը բլուր-
ներէն վար իջնելով դէտ 'ի իրենց
տնակը կուգայ :

Լեոնը դարձանալով դուրս ելաւ,
և տեսաւ որ իրաւցընէ աղուոր
կառք մը դէտ 'ի տանը դիմացը
կուգար: « Անշուշտ՝ ճամբորդ են,
ըսաւ, որ մուրեր են, ու Պրէյ քաղ-
քին ճամբան հարցընելու կուգան.
երթանք դիրենք հրաւիրենք որ աս
օրս մեզի հետ անցընեն, մեզի ալ
մէկ ուրախութիւն մը կըլլայ » ըսաւ
ու սկսաւ կառքին դիմացը երթալ.
ձիերը չիրնալով աւելի առաջ եր-
թալ՝ տնակէն քիչ մը հեռու կեցեր
էին :

Եղուարդն ալ վազեց ետեւէն ե-
կաւ, ու շատ դարձացան տեսնելով
որ կառքին մէջի ճամբորդներն էին
Ռիքթոն զօրապետը, Լամպէր զօ-
րապետը որ պատերազմէն նոր
դարձեր էր, Լամպէր վաճառակա-
նը և ան վաճառականը որուն հետ
Լեոնը Լոնարայի մէջ բարեկամա-
ցեր էր :

Չենք կրնար պատմել թէ ինչպէս ուրախացան մէկզմէկ տեսնելով: Երբոր քիչ մը հանգչեցան՝ Ռիքթոնը Եղուարդին ըսաւ. « Սովորականէ դուրս բան մը ունիք կարծեմ այսօր. ինծի կերևնայ թէ ուրախութեան մէջ էք »:

— Աղէկ գիտցաք, ըսաւ Լեօնը, բարի եկաք, ներս հրամեցէք. վասն զի այսօր Եղուարնիս փեսայ ըրինք »:

— « Ի՞նչ կըսես, ըսին ճամբորդները մէկ բերան, Եղուարդը այսօր պսակուեցաւ հա. չըսես թէ մենք ալ հարսնեւորներէն ենք »: Եղուարդը մէկէն ներսի խուցը հրամցուց զիրենք:

« Փա՛ռք Աստուծոյ որ աս տղուն մայրը տեսայ, ըսաւ Ռիքթոնը, որ մեզի այնչափ սիրելի էր: Մենք եկանք որ իրեն երախտագիտութիւննիս ցցունենք, և իրեն քաջութեանը փոխարէնը տանք:

« Ես ալ եկայ որ, ըսաւ Լամպէր վաճառահանը, իմ շնորհակալութիւնս ընեմ Գաստոնին խաթու-

նին որ իմ կեանքս ազատեց: Ընդունէ խաթուն իմ շնորհակալութիւններս, և քու տղոցդ աղէկութիւնը տեսնելով, ծերութեանդ ատենը մխիթարուէ. ա՛ռ աս քսակս ալ, իմ երախտագիտութեանս պըղտի նշան մը ըլլայ »:

Եսթերը որ ուրախութենէն ու զարմանալէն կը դողդղար, առջի բերան ան ոսկիով լեցուն քսակը չուզեց առնել. բայց վաճառականը շատ ստիպելով տուաւ զանհիկայ:

Ռիքթոն զօրապետն ալ ծոցէն ոսկի միտալ մը հանեց ու Եդուարդին կուրծքը կախելով ըսաւ .
« Սպանիայի մէջ քաջութեամբ պատերազմելուդ համար՝ ա՛ռ աս ոսկի միտալը որ քու ծառայութիւններուդ փոխարէնն է: Սա միտալը քանի որ փայլի քու կուրծքիդ վըրայ՝ յիշեցընէ քեզի և ուրիշներուն ալ՝ թէ քու արիւնդ հայրենեացդ համար թափեր ես: Իսկ առած խոցերուդ համար ա՛ռ քեզի տէրութեան կողմանէ ինչուան՝ ի մահ թո-

չակիդ գիրը, որպէս զի ծերու-
թեանդ ատենը հանգիստ ապրիս»:
Լամպէր վաճառականն ու մէկալ
նաւուն վաճառականն ալ բոլոր
տնեցոց այլ և այլ ընծայներ տուին:
Եսթերն ալ շնորհակալ ըլլալով ա-
նոնց կ'ըսէր. « Հիմա իմացայ ան
խօսքին ճշմարտութիւնը՝ թէ աս-
տուածապաշտութիւնն ու առաքի-
նութիւնը ամէն բանէն վեր են: Աս-
երկու տղոցս երթալէն 'ի վեր՝ քա-
չած վիշտերուս մէջ ամենեւին չէի
կարծեր որ այսպիսի երջանկու-
թիւն մը պահուած ըլլայ մեզի, մա-
նաւանդ կը տարակուսէի ալ թէ
արդեօք նորէն պիտի տեսնեմ զա-
նոնք. իրաւ որ մենք միշտ Աստու-
ծոյ վրայ դրեր էինք յոյսերնիս, և
անոր համար չխաբուեցանք: Աս-
տուած զմեզ ինչուան անդունդին
եզերքը տարաւ, որպէս զի ետքը
հրաշալի կերպով մը զմեզ ազատէ:
Հեռու տեղուանք մեզի այսպիսի
օգնականներ պատրաստեր է ե-
ղեր, և իր բարութիւնը հիմա յայտ-

նի կերեցրնէ մեր վրայ »: — « Ի-
րաւ, այնպէս է, ըսաւ Նդուարդը,
միշտ պէտք է երախտագէտ ըլլանք
իրեն ըրած բարիքներուն »:

Սեղանի որ նստան՝ ամէն բանի
վրայ գիւղական վայելչութիւն մը
կերենար. կերակուրները հողէ նոր
ամաններու մէջ դրուած էին, և
վրանին մաքրութիւնը կը փայլէր:
Լոնտրայէն եկած հարսնեորները
տեսակ տեսակ որսի մսերուն ու
ձկներուն վրայ կը զարմանային. ա-
խորժանքով կերան ու խմեցին, և
ամէն բան համով կուգար իրենց:
Եւ որովհետեւ օդը խիստ աղուոր
էր՝ հարսնեորները իրիկուան դէմ
սեղանէն ելան ու գնացին բլուրնե-
րուն վրայ պտրտելու: Նդուարդն
ալ առաւ իրեն քնարը և երբոր ա-
մէնքը նստան՝ շտկեց անոր թելե-
րը, և անտեղի գիւղական կենաց
երջանկութեանը վրայ շինած խա-
ղերէն երգեց: Եւ փոմէն ալ սկսաւ
իր սուր ձայնովը իրիկուան աղօթ-
քը երգել՝ որ մայրը իրեն սորվե-

ցուցեր էր: Աս գեղեցիկ օրս այսպէս ուրախութեամբ անցուցին:

Երկրորդ օրը Ղևոնին հետ որսի գնացին անտառին ներսի կողմերը. մէկալ օրն ալ Եղուարդը առաւ տարաւ զանոնք լճին եզերքը և ձուկ բռնելով զիրենք կը զուարճացընէր: Ասանկով շուտ մը շաբաթը անցաւ, ճամբորդները այնպէս ուրախացեր էին՝ որ կարծես թէ չէին ուզեր բաժնուիլ. բայց ամէնքն ալ բանի գործքի տէր մարդիկ ըլլալով՝ վերջապէս որոշեցին որ դառնան:

« Իմ միտքս ան էր որ զքեզ ալ հետս տանիմ, ըսաւ Ռիքթօնը Եղուարդին, բայց հիմկուհիմա աս բանս ինծի անկարելի կերևնայ. բայց թէ որ Աստուած չընէ, յանկարծ պէտք ըլլայ աս տեղս թողուլ՝ յուսամ որ զիս չես մտնար, ինծի կ'իմացընես, որ ես ալ ձեռքէս եկածին չափ քեզի օգնեմ »:

« Ես ալ նոյն բանը կը խոստանամ, ըսաւ Ղամպէր վաճառակա-

նը՝ իր քարեկամին խօսքը կտրե-
լով, որովհետև կեանքս քեզի պար-
տական եմ: Իմ տունս տեղս քու-
կինդ է, և թէ որ աս կեանքիս մէջ
չկարենամ հատուցմունք ընել քու-
կին և քու հօրդ ըրածին, կը յու-
սամ որ Աստուած գերեզման մը տ-
նելէս ետքը կը հատուցանէ»: Ե-
դուարդն ալ բան մը չկրցաւ զրու-
ցել, բայց աչուրներէն վազած ար-
ցունքը յայտնի կընէր իր սէրն ու
երախտագիտութիւնը:

Նաւուն վաճառականն ալ Ղևո-
նին աղաչեց որ բանի մը կարօտու-
թիւն ունենայ նէ՛ իրեն իմացընէ-
ան ալ խօսք տուաւ: Վերջապէս
կառքին ձիերը լծեցին՝ չորս ճամ-
բորդները մէջը մտան՝ ու ելան գը-
նացին:

ԳԼՈՒԽ ԺԹ

Եղբայրական սէր:

Ասոնց երթալէն ետքը Աւոնն ու
Եդուարդը նոր ջանքով մը իրենց
սովորական գործքերուն ձեռք զար-
կին: Առաւօտը կանուխ ջերմեռանդ
աղօթք մը ընելէն ետև՝ երկուքն ալ
կ'երթային իրենց արտը, և բարի
նախանձով մը կը ջանային որ ի-
րենց հօրենական պզտի կալուածքը
առջինին պէս պտղաբեր ընեն:

Այսպէս անդադար աշխատելով
երկիրը մշակեցին, ցորենն ու գետ-
նախանձորը ցանեցին. աս բոյսը ան-
ատեն իրլանտայի մէջ քիչ կը գըտ-
նուէր, բայց ետքերը կարծես թէ
Աստուծոյ նախախնամութեամբը
խիստ շատցաւ, անանկ որ անկէ
ետև արմտիք չգտնուելուն համար

խեղճ գեղացիները շատ նեղութիւն
չէին քաշեր: Այսպէս երկուքին աչ-
խատանքովը՝ երեսի վրայ ձգած ու
անապատ դարձած երկիրները՝
զուարճալի ու պտղաբեր արտեր
կը դառնային:

Իրենց գալէն ետքը Իրլանտայի
տնակին ամէն բաները փոխուե-
ցան. ան պարտէզը ուր որ Եսթերը
առաւօտ իրիկուն հովահրելու հա-
մար ժուռ կուգար, շատ աղուոր
դարդարեցին. արտերը առատ ցո-
րենով ծածկուած էին, և անոնց
բոլորաիքը պտղատու ծառեր տըն-
կած էին, որոնց պտուղները տէ-
րերուն անխոնջ աշխատասիրու-
թիւնը կը ցցունէին: Եւփիմէին ա-
րածած ոչխարներուն ամէն մէկը՝
իրեք ոչխարի տուած կաթէն աւելի
կը բերէին:

Եզուարդին նաւակը որ ձուկ
բռնելու համար կը գործածէր՝ տե-
սակ տեսակ գոյներով ներկած էր.
Վեռնը անոր անունը Երկու եղ-
բարք դրած էր. սլզտի կայմին ծայրն

ալ բարակ կտաւէ դրօշակ մը կար՝
որ թեթև քամիով մըն ալ կը շար-
ժէր :

Լճին եզերքը բարձրացած կա-
ղամախները դաշտերուն վրայ շուք
կ'ընէին. բլուրներուն վրայի եղևնի
ծառերն ալ՝ աչտարակի պէս ձորին
չորս կողմանէ կը սլատէին ու հիւ-
սիսային քամիներուն դէմ կը դը-
նէին, անանկ որ ան աղուօր ար-
տերը միշտ կանաչ կը մնային :

Երբոր օտարականները կը տես-
նէին ան ծլած ծաղկած ձորը, ան
տեղէն անցնող աղքատներուն կը
հարցընէին թէ « Աս պզտի երկրին
տէրը ո՞վ է » : Անոնք ալ Եսթերին
տունը ցուցընելով՝ երախտադէտ
սրտով կըսէին. « Սա բարեպաշտ
ու ողորմած մարդիկներուն է » :
Այսպէսով չէ թէ միայն իրենց բա-
րի անունը կ'ելլէր, հապա նաև ի-
րենց աշխատասիրութեան ու ճըշ-
մարիտ քրիստոնէութեան անուշ
հոտերն ալ կը բուրէր :

Իսկ երկու եղբայրները ուրիշ
ԻՐԼԱՆՏ . ՏՆԱԿԸ . 2

ներու ըրած բարիքներուն վրայ ուրախանալով՝ երախտագէտ սրտով Աստուծոյ փառք կուտային, և իրենց առանձնութիւնն ու չափաւորութիւնը ամէն բանէն վեր կը դընէին: Ամէն մէկ օրերնին Աստուծոյ մէյմէկ բարիքը կը սեպէին, ամենեւին փուճ ատեն չէին անցըներ, միշտ կ'աշխատէին որ իրենց տունը երջանիկ ընեն. օր օրուան վրայ իրենց եղբայրական սէրն ալ կ'աւելնար, որն որ աւելի յայտնի եղաւ այսպիսի անկարծելի դիպուածով մը:

Աշնան ատեն երբոր հունձքի աշխատանքները լմընցեր էին, Աւոնը առաւօտը կանուխ հրացանը ուսը զարկած՝ անտառին մէկ կողմը որսի գացեր էր, Եդուարդն ալ նոյն օրը ամէն պատրաստութիւն տեսնելով իրիկուան դէմ՝ ձուկ որսալու ելեր էր: Երկու եղբարք ըսուած նաւակը՝ լծին ալիքներուն վրայ եզի պէս կը սահէր. արևը մարը մտնելու վրայ ըլլալով՝ իր ճառագայթներովը ոս-

կիի պէս լուսաւորուած էին ան-
տառին բարձր ծառերն ու բլրակ-
ներուն գլուխները . Եդուարդն ալ
երբոր լծին դիմացի եղերքին մօ-
տեցեր էր, ու տնակին վրայ կը
նայէր, տեսաւ որ Մարիամն ու
Եւփիմէն նշան կ'ընէին իրեն՝ որ ետ
դառնայ. ուստի շուտով մը նաւա-
կին քիթը դէպ 'ի պզտի նաւահան-
քիստը դարձուց :

Նոյն օրն ալ շատ ձուկ բռնած
ըլլալուն՝ նաւակը ծանրացեր էր .
Եդուարդին թեւը պատերազմի մէջ
առած խոցին պատճառաւ՝ շատ տը-
կարացած էր. երբոր տեսաւ որ թի
քաշելով շատ յոգներ է, ուղեց ա-
ռադաստ բանալ, հովն ալ դէպ 'ի
տնակը փչելով՝ իրեն յաջող կ'երև-
նար : Աւոնը առադաստ բանալու
ու բանեցընելու կողմանէ շատ վար-
պետ էր, բայց եկո՛ նայէ որ Ե-
դուարդը նոյն յաջողութիւնը չու-
նէր . ուստի քամիին փչելովը՝ ա-
ռանց իմանալու նաւակը ցամաքէն
հեռացեր էր, առադաստն ալ դեռ

ինչպէս որ պէտք էր բացուած չըլ-
լալով՝ հովը դարնելուն պէս նաւա-
կը շրջեցաւ :

Ո՛վ կրնայ պատմել Մարիամին
ու Եւփիմէին սրտագողը . երկուքը
մէկէն կանչուըռտելով լճին քովը
վազեցին . Վարդուհին ալ որներսը
իրիկուան կերակուրը եփելու հետ
էր, աս ձայնը լսելուն պէս՝ ձեռքի
բանը թողուց ու մէկէն լճին քովը
վազեց . խեղճ Եսթերն ալ տնակին
դրանը դիմացը ծունկ չորեցաւ և
ձեռուրները դէպ'ի երկինք վերցը-
նելով կանչեց . « Տէր Աստուած
դուն պահէ իմ խեղճ տղուս կեան-
քը » :

Նոյն ատեն երկու անգամ հրա-
ցանի ձայներ լսուեցան, որ շու-
տով օգնութիւն հասնելու նշան էր .
մէյմըն ալ մարդուն մէկը լեռան
վրայէն կայծակի պէս վար իջաւ,
ցատկեց լճին մէջ ու սկսաւ իր ու-
ժով թևերովը ալիքները պատըռ-
տելով առաջ երթալ : Երբոր մօ-
տեցաւ ան տեղը ուր որ նաւակը

դարձեր էր, մէյմըն ալ տեսաւ որ խեղճ Եդուարդը հազիւ ինքզինքը ջրին վրայ կրնար բռնել, կարծես թէ մահուան դուռը հասեր էր: Աստեսածին պէս, զլուխը ալիքներէն վեր հանելով պոռաց. « Քեզ տեսնեմ, Եդուարդ . . . ես ալ քեզի օգնելու եկայ . . . »

Ան ատենն որ Եդուարդը ինքզինքը Աստուծոյ կը յանձնէր, ու մեռնելու պատրաստուելով վերջի անգամ՝ Իրլանտայի տնակին վրայ կը նայէր՝ աս ձայնը լսելուն պէս քիչ մը սիրտ առաւ: Մազ մնացեր էր որ ջրերուն տակը պիտի ծածկուէր, մէյմըն ալ Լեոնը վրայ հասաւ, բռնեց զանիկայ ու կռնակը առնելով սկսաւ լողալով դէպ ՚ի ցամաքը երթալ: « Երթանք, վախճկայ, կըսէր Լեոնը, Աստուած ըզմեզ ձեռքէ չթողուր, ես բաւական ոյժ ունիմ, հանդարտ հանդարտ լողալով կրնամ՝ զքեզ ինչուան ցամաքը հանել »: — Սիրելի եղբայրս, ըսաւ Եդուարդը, վախեմ ինչուան

ցամաք չենք կրնար հասնիլ . . . ին-
ծի կերևնայ թէ շատ յողներ ես . . .
դուն գնա՛ ցամաքը ել, թող ես հոս
տեղը մեռնիմ » : — « Չէ չէ, ըսաւ
Ղևոնը, կամ մէկտեղ կ'ազատինք,
կամ մէկտեղ կը մեռնինք » :

Եւփիմէն, Մարիամն ու Վար-
դուհին ալ անոր անվախ համար-
ձակութենէն իմացան որ Ղևոնն է
եղեր. և ասդիս անդին վազելով
օգնութիւն կը կանչէին. Եսթերը
դրան դիմացը չոքած միակերպ ա-
ղօթք կ'ընէր: Աստուած ալ լսեց ի-
րեն աղաչանքին. և յանկարծ դի-
մացի կողմէն նաւակ մը դուրս ե-
լաւ և այնպէս շուտով ալիքները կը
պատռէր որ կարծես թէ լճին վրայ
կը թռչեր. շուտով մը հասան տե-
սան որ Ղևոնն ալ սկսեր էր ուժէ-
րնկնիլ. մէկէն հաստ չուան մը ձգե-
ցին, Եդուարդին ալ ծառի հաստ-
կեկ ճիւղ մը երկնցուցին. և ամէն-
քը արիւն քրտինք մտած կը ջա-
նային զասոնք մահուանէ ազա-
տել . . . վերջապէս երկուքն ալ ա-
զատեցան :

Եւփիմէն շուտով սկսաւ դէպ 'ի տուն վազել ու կը կանչէր. « Աղատեցան, մարիկ, աղատեցան » : Բայց խեղճ մայրը որ տղոցը մեռնելուն ատենը այնչափ ջերմեռանդութեամբ աղօթք կ'ընէր, չկրցաւ իրենց աղատութեան ուրախալի աւետիսին դիմանալ. « Փա՛ռք քեզ Աստուած » ըսաւ ու հոն ընկաւ մարեցաւ » :

Երբոր Եսթերին խելքը վրայ եկաւ, տեսաւ որ տղաքը չորս կողմը առեր էին, և իր վրայ հոգ կը տանէին: Աչքը բացաւ չբացաւ. « Ո՛վ դաւակներս, եկէք փառք տանք Աստուծոյ, որ զձեզ աղատեց » ըսաւ, և ամէնքը չորեցան Աստուծոյ շնորհակալ եղան: — « Լեռն, ըսաւ Եսթերը իր անդրանիկ տղուն, ատենօք Եդուարդը քու տեղդ իր կեանքը դրեր էր, ասօր դուն ալ քու կինդ իրենին տեղը դրիր զինքը աղատելու համար: Աստուած փոխարէնը քեզի տայ ու օրհնէ ըզքեզ, ինչպէս որ հիմա ես օրհնեմ » :

Յգնութիւն հասնող ձկնորսները
տնակին մէկ անկիւնը քաշուած
լուռ կեցեր էին. Յսթեր դարձաւ
անոնց ու ըսաւ. « Բարի դրացի-
ներս, Աստուծմէ ետքը դուք իմ
տղոցս կեանքը ազատեցիք. այս-
պիսի մեծ բարիքի մը համար ինչ
հատուցմունք կրնանք ընել ձեզի :

— « Խաթուն, ըսաւ ձկնորսնե-
րուն մեծը՝ որ ճերմակ մազերով
ձեր մըն էր, և աս դիպուածիս մէջ
երիտասարդական աշխուժութիւն
մը ցցուցեր էր, մենք երբոր կանո-
թենայինք նէ, դուք ալ թէպէտ և
աղքատ էիք, բայց մեզի ուտելու կե-
րակուր կուտայիք, մեր մերկ ու բո-
պիկ տղաքները՝ ձեր զգեստներովը
կը պարտըկէիք, մեր տունը երբոր
վիշտերով ու ցաւերով կը լեցուէր՝
դուք կուգայիք զմեզ կը մխիթա-
րէիք. հիմա ասոնք մոռնալով՝ մեզի
փոխարէն ալ ընել կուզէք. օրհ-
նած ըլլաք, և Աստուծոյ շնորհքը
աս տնակիս մէջ բնակողներուն
վրայէն չպակսի » : Ան պատուական

ծերուկը շատ բարեմաղթութիւններ ալ ընելով իրենց՝ մնաք բարով՝ գիշեր բարի ըսելով՝ իրեննեւրուն հետ մէկտեղ ելաւ գնաց :

« Գիտցած ըլլաք զաւելըներս, ըսաւ Եսթերը իր աղոյցը, որ Աստուած բարի գործք մը առանց վարձքի չթողուր » :



ԳԼՈՒԽ Ի

Բարի ու Երջանիկ մահ :

Թէպէտ և Իրլանտայի տնակին ամէն բանը տեղն էր, և ամէն պէտք եղած բաները առատապէս ունէին, բայց իրենք այնչափ ուրախ չէին. վասն զի Եսթերին աչքի լոյսը բոլորովին խաւարեր էր, և ուժէտը ընկած ըլլալով՝ անկողնէն չէր կրնար ելլել: Իրեն զաւկրները աս բաներս տեսնելով յուսահատած մէկմէկու կ'ըսէին. Վախենք ձմեռը վրայ չհասած՝ սիրելի մայրերնիս պիտի կորսունցընենք »:

Եսթերը անոնց տրտմութեան սլատճառը իմանալով, ըսաւ իրենց. « Ինչո՞ւ կուլաք, սիրելի զաւկրներս. ես մեռնելէս չեմ վախեր. այսչափ ատեն ասրիլս բաւական չէ՞ մի ին-

ծի: Քրիստոնեայ մարդը ինչպէս
չուրախանայ՝ երբոր տեսնէ որ քիչ
ատենէն պիտի երթայ՝ ու տեսնէ
իրեն երկնաւոր հայրը, որն որ այն-
չափ շնորհք տուեր էր իրեն երկ-
րիս վրայ: Մեռնելու համար ա-
մենեւին չեմ ցաւիր, որովհետեւ իմ
որդիքս նորէն տեսնելու արժանի
եղայ. երբոր զձեզ ասկէ ետքը չեմ
կրնար տեսնել նէ, ինչո՞ւ երկար
կեանքի փափաքիմ »:

Աս խօսքերովը խեղճ որդւոցը
սիրտը կտոր կտոր եղաւ: « Հաւտա-
ցէք խօսքիս, ըսաւ Նսթերը, զձեզ
ամէնքնիւ ալ ողջ առողջ տեսնե-
լուս վրայ այնչափ ուրախացեր եմ՝
որ մահը աչքիս բան մը չերենար,
բայց հիմա կ'ուզեմ ձեզի իմ վերջի
կամքս յայտնել. աս տնակս իմ
պապուս շինածն է, ուստի կ'ուզեմ
որ մէկտեղ հոս տեղս նստիք ու
զասիկայ չթողուք: Ինչ որ կը ցա-
նէք, ինչ որ կը հնձէք՝ եղբօր
պէս մէջերնիւ բաժնեցէք: Մէկ-
տեղ վայելեցէք անցաւոր ուրա-

խութիւնները, ու միատեղ քաշեցէք նաև ամէն աս կեանքիս վիշտերը: Միշտ մէկ սիրտ ու մէկ տրնուոր եղէք, որպէս զի ձեր վրայ կարենան զրուցել աս խօսքս՝ թէ ով որ կուզէ աշխարհքիս խաղաղութեանը ու միաբանութեանը համը առնուլ, երթայ թող Խրլանտայի տնակը տեսնէ: Սիրելի զաւկըներս, իմ վերջի խօսքերս ձեր ակընջին օղ ըլլայ. Մէկզմէկ սիրեցէք. աս խօսքս Յիսուսին վերջի խօսքերն են. դուք ալ նայեցէք որ Քրիստոսի տուած նոյն սուրբ օրէնքը պահէք: Չըլլայ թէ սլզտի անմիաբանութեամբ մը հիմակուան ունեցած խաղաղութիւննիդ տակն ու վրայ ընէք. իրարու պակսութեանը աչք գոցեցէք և մէկմէկուան իրաւութեանցը ներեցէք, և միշտ յիշեցէք որ Աստուած խաղաղութիւն կը սիրէ, և իր օրհնութիւնը կը վերցընէ ան տանը վրայէն՝ ուր որ կուի պակաս չէ: Միշտ ուղղափառ կրօնքնիդ հաստատուն պա-

հեցէք, վասն զի մեր կրօնը Քրիստոս հաստատած է, իսկ մեկալ ազանդները մարդկանց հնարքներն են, որ իրենց հետ մէկ տեղ պիտի կորսուին. ուղղափառ եկեղեցւոյ ճշմարիտ որդւոցը պէս՝ ջանացէք ձեր քրիստոնէական պարտքերը ճիշդ կատարելու, և միշտ յիշեցէք որ անիկայ միայն վարձք կ'առնու՝ ով որ ինչուան վերջը առաքինու թիւն գործելու ետևէ կ'ըլլայ »: Եսթերը երկայն բարակ խօսելէն յողնելով՝ լռեց. դաւկրներն ալ խոստացան որ իրեն վերջի խրատները ամենևին չմոռնան :

Երկրորդ օրը Եսթերը գեղին աւագերէցը կանչել տուաւ և վերջի խոստովանանքը ըլլալով՝ ջերմեռանդութեամբ սրբութիւն առաւ : Քահանան որ չէր գիտեր անոր այնչափ ծանր հիւանդ ըլլալը՝ չուզեց վերջին օծումն ալ տալ, բայց ետքը անոր աղաչանքին հաւանեցաւ, ու տեսնելով անոր այնպիսի ջերմեռանդական մեռնելու պատ-

րաստութիւնը՝ մեծ բարի օրինակ
առաւ: Եսթերը երկայն ատեն ա-
ղօթք ընելով Աստուծոյ ըրած բա-
րիքները կը յիշէր, ու քաղցր ար-
ցունք կը թափէր: Չաւկընները ա-
մենեւին անոր անկողնին քովէն
չէին հեռանար. երբոր տեսան որ
երթալով կը տկարանայ, իրեն վեր-
ջի օրհնութիւնը ուզեցին:

Եսթերը վերջին ջանքը ընելով՝
ձեռուրները վեր վերցուց, և տկար
ձայնով մը ըսաւ. «Աստուծոյ սուրբ
չնորհքը ձեր ու զաւկըններնուդ վը-
րայ ըլլայ, և իր սէրն ու վախը սըր-
տերնուդ մէջ տպաւորուի. փարա-
տէ ան ամէն վտանգները՝ որ ձեր
հոգւոյն փրկութեանը արգելք կըր-
նան ըլլալ. ձեր ամէն պիտոյքը ին-
քը հոգա, և զձեզ ալ երկընքի ե-
րանութեան հասցընէ՝ ուր ես կը
յուսամ քիչ ատենէն երթալու:
Մնաք բարով սիրելի զաւկըններս,
երբեմն երբեմն յիշեցէք ձեր մայ-
րը, ես ալ ձեզի համար բարեխօս
ըլլալէն չեմ դադրիր»:

Ետքը դողդղուն ձեռքովը օրհնեց իրեն յուսահատած զաւկըններն ու թոռները և բոլոր տնեցիքը . ջերմեռանդութեամբ խաչելութիւնը պագաւ ու Յիսուս, Մարիամը սելով հոգին աւանդեց . ինքը գրեթէ ութսուն տարուան էր :

Իրեն մարմինը հասարակաց գերեզմաննոցին մէջ թաղեցին, վրան ալ պարզ տապան մը շինեցին՝ քարէ խաչ մըն ալ տընկեցին, որպէս զի քանի որ տեսնեն զանիկայ անտեղը թաղուած բարեպաշտ մայրերնին յիշեն՝ որ զիրենք ինչուան իր մահուան ատենը իր հոգւոյն պէս կը սիրէր : Եդուարդը անոր գերեզմանին քովը ուռենի մը տընկեց և շատ անգամ իր արցունքովը կ'ոռոզանէր : Եւ փիմէն ալ ամէն շաբաթ հոն տեղը ծաղիկ կը սփռէր և աղօթք կ'ընէր :

Անկէ ետքը աս գերեզմանը իրենց ուխտատեղի մը դարձաւ . երբոր վրանին թշուառութիւն մը կը հասնէր՝ Եսթերին գերեզմանը կը

վաղէին, և իրենց բարեպաշտ մօ-
րերնուն զուրցածները կը յիշէին .
և ան խաղաղութեան, քաղցրու-
թեան և համակերպութեան հողին՝
որ աս կնիկը այնչափ առաքինու-
թիւններով զարգարեր էր, կառ-
ծես թէ գերեզմանին քարէն կը թա-
փանցէր և իր տղոցը սիրտ կուտար
բարեգործութեան ետեւէ ըլլալու :
Ան տեղը կը սորվէին թէ նեղու-
թիւններու ինչպէս համբերելու է ,
և Սասունձոյ անհատնում ողորմու-
թեանը ապաւինելու է՝ որն որ զի-
րենք այնչափ թշուառութիւններէ
ազատեր էր. ասով ճախորդու-
թեան դէմ դնելու ու առաքինու-
թեան ճամբուն մէջ հաստատուն
մնալու համար նոր ուժ մը կ'առ-
նուին :

ԳԼՈՒԽ ԻՍ.

Կատարեալ համբերութիւն :

Եսթերին մեռնելէն ետքը Իրլանտայի տնակին մէջ նոր բան մը չհանդիպեցաւ. Լեոնն ու Եդուարդը սիրով մէկմէկու հետ կը բնակէին, և իրենց մօրը ուղածին պէս մէկ տնուոր եզեր էին : Գլուխնուն եկած դժբաղդութիւններէն խրատ առնելով՝ կը փախչէին ան առիթներէն որոնք որ իրենց խաղաղութիւնը կրնային օւրել : Եդուարդին կուրծքին վրայի ոսկի միտալը ան կողմի մարդիկներուն աչքն ու համարմունքն իրեն կը քաշէր, և թէ որ նոր տեղ մը երթար՝ ամէնքը վրան կը թափէին : Մայրերը զանկայ իրենց տղոցը ցուցնելով կ'ըսէին. « Տեսէք Եսթերին տղան,

ասիկայ ան տղան է որ Սպանիայի պատերազմին մէջ եղբօրը տեղը զինուոր գրուեցաւ. Ստուած ալ աս եղբայրսիրութեան գործքին վարձքը իրեն տուաւ. թէպէտ ինքը եղբայրը կը սիրէր, բայց եղբօրմէն աւելի մայրը կը սիրէր ու հիմակուան երջանկութիւնը իր բարի վարքովն ու ճակտին քրտինքովը վաստըկած է. իրեն առաքինութեանցը համար ինչուան թագաւորն ալ իրեն եկամուտ կապած է »:

Եւ իրաւցընէ Եդուարդը ամէն ամիս իր եկամուտը կ'առնէր, և տնեցիքը աւելի ան ստըկով կ'ապրէին, աղքատաց ալ առատ ողորմութիւն կուտային: Իրենց կերակուրը առջինին պէս պարզ էր, և ինչ որ անտառէն, լճէն ու պարտեզէն կ'ելլէր, անով զոհ կ'ըլլային, շատ անգամ ալ աղքատները կուգային իրենց հետ մէկտեղ կերակուր կ'ուտէին:

Եդուարդը շատ տղաք ունեցաւ, բայց բոլորն ալ պզտի վախճանե-

ցան . իսկ հայրերնին առանց տրր-
տընջալու՝ Աստուծոյ կամացը կը
հնազանդէր . և միշտ իրեն դրած
բարի առաջադրութիւններուն մէջ
առաջ երթալու կը ջանար :

Աւոնն ալ իր աղէկ բնաւորու-
թեանը մէջ մնաց . և թէպէտ ինքը
մեծն էր , բայց եղբօրը լաւ բնաւո-
րութիւնն ու կատարելութիւնները
տեսնելով՝ բոլոր տանը կառավա-
րութիւնը անոր յանձներ էր : Ի՛նչ
որ Եսթերը առաջուց զրուցեր էր ,
ան ատենը կը կատարուէր . վասն
զի երբոր ան կողմի բնակիչները
կ'ուզէին կարգաւորեալ տուն մը
օրինակ բերել՝ Իրլանտային տնակը
կը յիշէին :

Շատ տարիներ այսպէս անցնե-
լէն ետքը , օր մը յանկարծ Աոնտրա-
յէն Եգուարդին թուղթ մը եկաւ .
վրայի գրէն ճանչցաւ Աամպէր զօ-
րապետին ըլլալը և շուտով մը բա-
ցաւ : Ասիկայ Իրլանտայի տնակին
մէջ հանդիպածները լսած ըլլալով՝
կ'ուզէր մէյմը զինքը տեսնել , կ'ա-

զաչէր որ իրեն մէկիկ մէկիկ գրէ թէ իրեն բաները ի՞նչպէս կ'երթան, արդեօք Ղևոնին հետ խաղաղ կրնայ ապրիլ, և այլն: Եդուարդն ալ շուտով պատասխան գրեց, և առանց շատախօսութեան ամէն բան իմացուց ու հրաւիրեց զանիկայ՝ որ գայ ու դարունը իրենց հետ անցընէ:

Եդուարդը աս թուղթը զրկելէն ետքը երկու ամիս անցեր էր, պատասխան չէր առած:

Օր մըն ալ երբոր եղբօրը հետ որսի գացեր էր, անտառին մէջ խարաղանի ձայներ լսեցին և տեսան որ անտառին ճամբէն գետնի փոշին վեր կը բարձրանար: Երկուքն ալ կանկ առին, մէյմըն ալ տեսան որ քանի մը բեռնաւորուած կառքեր դէպ 'ի Իրլանտայի տնակը կ'երթային:

Ղևոնը « Ետ գառնանք, ըսաւ եղբօրը, կերենայ թէ մեզի կուգան կոր. կարելի է մեր Ղոնտրայի բարեկամներն են. երթանք զիրենք ներս ընդունինք » ըսաւ և ուրա-

խութեան նշան հրացանը պարպեց. կառավարներուն մէկն ալ անոր պատասխան տալու համար՝ ետեէ ետե իրեք չորս ատրըճանակ պարպեց :

« Ասոնք անշուշտ բարեկամ մարդիկ են, ըսաւ Եղուարդը, շուտ ընենք անոնցմէ առաջ տուն հասնինք » : Հինգ վայրկեանէն տնակին դռանը դիմացը հասան, ու կառքերը հոն տեղը կեցան . Ամպէր զօրապետը կառքէն վար իջաւ ու Եղուարդին ճիտը պըլլուեցաւ. վերէն 'ի վար սե հագեր էր, թեւն և գլխարկին վրայ ալ սե կապեր էր : « Բարի լոյս, բարի տեսանք, ըսաւ Եղուարդին, ահա քու խօսքիդ հաւանեցայ ու եկայ գարունը մէկ տեղ անցընելու » :

Եղուարդը շատ ուրախացաւ և ըսաւ « Թէ որ սրտանց չըլլար ատ հրաւէրքը, չէի ըներ :

» Գիտեմ, գիտեմ, այդ բանիդ վրայ տարակոյս չունիմ, ըսաւ զօրապետը, շատ շնորհակալ եմ » :

« Բայց սուգի մէջ կերևնաք կոր,
ըսաւ Լեոնը »:

« Մէյմը ներս մտնենք, ամէն
բան կը պատմեմ, ըսաւ. միայն ձիե-
րուն քիչ մը խոտ տուէք, կառա-
վարներուն ալ ուտելու բան մը հա-
նեցէք »:

Նախաճաշիկ ընելու ատեն, Լամ-
պէրը Լեոնին ու Եգուարդին քո-
վը նստաւ ու ըսաւ անոնց:

« Սիրելի բարեկամներս, կուզեմ
սիրտս ձեզի բանալ ու խորհուրդս
ձեզի յայտնել. անցեալ տարի հօ-
րաքոյրս մեռաւ. գիտէք որ ինչուան
ան ատենը տանը բաները հոգա-
ցողը ինքն էր: Չորս ամիս ալ կայ
որ վաճառական եղբայրս ալ որ կը
ճանչնաք վախճանեցաւ. հիմա տա-
նը մէջ մինակ ես մնացի, մօտ աղ-
գական մըն ալ ամենեւին չունիմ:
Ես ալ մտածեցի ինչ ընեմ. տունս
և ամէն ունեցածս ծախեցի, ու
բանս դործքս ձգելով՝ միտքս դրի
որ աշխարհքիս զբաղմունքներէն
հեռանամ, մնացած կեանքս խա-

դադու թեամբ անցընեմ. վերջապէս որոշեցի որ ձեզի հետ դամ բնակիմ: Հիմա համարձակ ըսէք ինծի տեսնեմ, դուք ալ կ'ուզէք զիս ձեր տունը ընդունիլ. ամէն ունեցածս ալ ձեզի ըլլայ. ձեզմէ դատ որո՞ւ կրնայի թողուլ, մանաւանդ որ ձեր հայրը իմ կեանքս ազատելու համար մեռեր է: Ես իմ կողմանէս ամէն բան որոշած եմ, և միտքս դրրեր եմ որ իմ կեանքս Խրլանտայի տնակին մէջ անցընեմ. որովհետեւ ինծի համար երջանիկ տեղ մը կայ նէ՛ աս է: Թէ որ աս տունը ամենուս համար պզտի դայ՝ կը մեծցընենք. բայց տեսնենք դուք ինչ կ'ըսէք »:

Եւոնն ու Եդուարդը քիչ մը ատեն զարմացած մտածելէն ետքը, հաւանեցան աս բանիս:

« Արովհետեւ բաները որոշուեցան, ըսաւ զօրապետը, հիմա եկէք երթանք կառքերը պարպենք, որպէս զի ձիերն ու կառավարները տեղերնին ճամբենք »: Չորս կառք բեռը որ տան կահկարասիքն էին,

մէկ խառնակութիւն մը ձգեցին ան
պզտի տնակին մէջ՝ որ չէին գի-
տեր թէ այսչափ բանը ուր դնեն .
վերջապէս շատ աշխատելէն ետքը
հաղիւ կրցան տեղաւորել :

Լամպէրը շուտով մը ան խեղճ
տնակին վարժեցաւ, բայց Եդուար-
դը կուզեր էն աղէկ խուցը տալ տ-
նոր. բոլոր ձմեռը ասանկով ան-
ցուցին. Լամպէրն ու Եդուարդը
կրակին քովը նստած՝ շատ անգամ
իրենց ըրած պատերազմները կը
պատմէին : Գիշերները Եւփիմէն
հոգևոր գիրք մը կը կարդար, և ա-
մէնքն ալ անկէ մէյմէկ խրատ կը
հանէին :

Մէկ օր մըն ալ երբոր ամէնքը
մէկէն Եսթերին գերեզմանին այ-
ցելութեան դացեր էին, Եւփիմէն
սրտաշարժ ձայնով մը թովմաս
կրէյ անգղիացի բանաստեղծին
գերեզմանաց վրայ շինած երգին
աս կտորը սկսաւ զրուցել՝ որ Լամ-
պէրը իրեն սորվեցուցեր էր .



ԳԵՐԵԶՄԱՆՔ Ի ԳԻՒՂՈՐԷՍ

Ճեպ ետ փախեալ տիւ լուսաւոր .
Հընչեաց սրղինճն ողբաձայն .
Եւ հօտք խաշանց ընդ լեառն ընդ ձոր՝
Յանքոյթ փարախսըն դարձան :
Եւ սարտասեալ մըշակն յարօր
Փուլթայ ճեպի 'ի հիւզն իւր :
Յայնժամ արեգ 'ի շունչ կարկամ
Ձիւր ժողովեալ ճառագայթ ,
Լըքեալ թողու դամ քան ըզգամ
Լերանց բարձանց ըզգագաթ .
Խաղաղութիւն համատարած
Ձերկնից ըզգէմսըն գրաւեաց :
Դիշերագէմ ևեթ թըռչունք ,
Գարեալք խարխուլ յաւերակ՝
Ձորս պատատեն լուրթ բաղեղունք ,
Վուվուս արկեալ ողբերգակ ,
Եւ զուղևորըն մոլորեալ
Ահաբեկեն յերկիւղ մեծ ,
Ձի մի յերկչոտ՝ յանդուգն 'ի քայլ
Խռովէ զմահուն վայրս անմերձ :

Երեսք դաշտաց 'ի լըրթագոյն
Փեղձիցն 'ի մուծ հովանի՝
Զօրէն զմահու դաւըն սրգոյ
Տըխուր զհանդերձ ագանի .
Այլ և ցածուն այս դալարիք
Ըզգերեզմանս զարդարեն ,
Ուր միանգամ 'ի քուն քաղցրիկ
Հարք գեղջիցս դադարեն :
Զիք որ խռովէ զնոցուն հանգիստ ,
Ոչ այգարեր ձայն հաւուն ,
Ոչ սրբբանուէր ձայն տաճարիս՝
Յերգս օրհնութեան յեւս այգուն .
Ոչ գարնայնոյ շունչ քաղցրասիւք
Ի ծաղկաբոյր 'ի հողմիկ :
Ոչ ևս մատաղ անմեղ մանկտին
Ի գիրկըս մարց գրգուալից ,
Կամ հարց խոնջեալ 'ի գոգ նըստին՝
Առնուլ համբոյր բերկրալից :
Յաղքատ սեղանն՝ ուրախարար
Ոչ ևս բաժակքընդեղուն՝
Կենդանութեան ձայնէ զբարբառ ,
Դէմք զուարթանան , սիրտք զեղուն :
Ո՛հ , քանիցս վաստակեցին
Ի հունձ նոցին գերանդիք ,
Եւ քանիցս խովիք նոցին

Զակոս բացին 'ի յանդի •
Ո՛վ թէ քանի՛ երգ քաղցրալուր
Հընչէր յանտառս 'ի վայրիս՝
Մինչ 'ի տապար ծանր և ամուր
Կոտորէին զյաղթ մայրիս :
Այլ զի և արդ շիրիմք նոցին
Ոչ մինչ 'ի սպառ ծածկեսցին՝
Մնվարժ այս տառք և զարդք գեղջուկ
Դրոշմեալք յարձանս այս՝ զանուկ
Պահէն զհասակն և զբաղղն անշուք ,
Եւ առ նրմին տողք անհուն
Եղերերգէն տըխուր 'ի լար ,
Ու 'ի սրբբանուէր մատենէն՝
Ուսուցանեն թէ չէ մեղ հնար
Խոյս տալ ժանեաց մահուանէն •
Եւ զանցաւորն սպաղատին
Հառաչել խոր 'ի սրբաին : . . .


Խաչք անպաճոյճ , նոճք բարձրաբերձ
Այս գիւղական զարդ շիրմաց ,
Ընդ հովանեաւ տաճարին մերձ
Հանգչին խաղաղ՝ անկասկած :

Լամպէր զօրապետը առջի ձմեռը ամենայն հանգստութեամբ անցընելով՝ չէ թէ միայն միտքը չփոխեց, հասպա նաև որոշեց ալ որ անկէ ետքը իրեն օրերը ան երջանիկ տեղը անցընէ: Երբոր գարունը հասաւ որոշեցին որ տունը մեծցընեն. ասանկով Իրլանտայի տնակին քովը աղուոր տուն մը շինեցին, և ամէնքը հոն կը նստէին: Լամպերին խուցերը ամէնն ալ զարդարած էին, և ինքը բոլոր կեանքը հոն տեղը գոհ և ուրախ անցուց ինչուան իր մահը: Իրեն բոլոր ունեցածը երկու եղբարց ժառանգութիւն թողուց, ասով ան կողմի բնակիչներուն ամէնէն հարուստը եղան:

Երբոր Լեոնն ու Եդուարդը տեսան այսչափ հարստութիւնը կ'ըսէին. « Ան բանն որ մենք անգամ մը թշուառութիւն կը կարծէինք՝ մեր հարստութեանը սլատճառ եղաւ. Աստուած մեզի վիշտ տուեր է եղեր որ զմեզ փորձէ, և հիմա իր շնորհքովը զմեզ հարստացընէ: Ու-


րեմն իրեն երախտագէտ սրտով
ծառայենք, և ամենեւին չմոռնանք
թէ աշխարհիս ամէն բանը շուտով
կ'անցնի, և միայն Աստուած ու մեր
հոգին յաւիտեան պիտի մնան :

ԵՐԿՐՈՐԴ ՀՍՏՈՐԻՆ ՎԵՐՁԸ



ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

ԳԼ. ԺԱ.	Եդուարդին զինուորութե նէ ազատիլը	7
ԳԼ. ԺԲ.	Եդուարդին Լոնտրա հաս նիլը	22
ԳԼ. ԺԳ.	Եդուարդին գլխուն եկած փորձանքը	30
ԳԼ. ԺԴ.	Անիրաւ դատաստան	38
ԳԼ. ԺԵ.	Անմեղութիւնը ծածուկ չի մնար, երբ որ ըլլայ կը յայտնուի	53
ԳԼ. ԺԶ.	Երեկոյեան ընթերցմունք	66
ԳԼ. ԺԷ.	Անակնկալ ուրախութիւն	74
ԳԼ. ԺԸ.	Պսակ	83
ԳԼ. ԺԹ.	Եղբայրական սէր	95
ԳԼ. Ի.	Բարի ու երջանիկ մահ	106
ԳԼ. ԻԱ.	Կատարեալ համբերութի	113





Handwritten text at the top of the page, possibly a name or title, written in a cursive script.

Handwritten text in the center of the page, possibly a name or signature, written in a cursive script. The text is crossed out by a diagonal line.

(~~884-40~~)

24715

Handwritten signature or scribble, possibly reading "P. H. H." or similar, written in dark ink on aged paper.

24775